OSCE

Ժողովրդավարական Հաստատությունների և Մարդու Իրավունքների Գրասենյակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 25 ՄԱՅԻՍԻ 2003

## ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Office for Democratic Institutions and Human Rights

OSCE ODIHR

ՎԱՐՇԱՎԱ
31 հուլիսի 2003թ.

ՑԱՆԿ

I. Ամփոփիչ եզրակացություն 3

II. Ներածություն և ծանոթություն 5

III. Քաղաքական նախադրյալները 6

IV. Օրենսդրական դաշտը 7

Ա. Հիմնական ուրվագիծը 7

Բ. Օրենսդրական դաշտի գնահատումը 7

Գ. Պատասխանատվության ենթարկումը օրենսդրության խախտումների համար 9

V. Ընտրությունների կազմակերպումը 12

Ա. Ընտրական հանձնաժողովների կազմումը 12

Բ. Ընտրությունների կազմակերպումը 13

Գ. Ընտրացուցակները 15

VI. Կուսակցությունների, դաշինքների և թեկնածուների գրանցումը
Error! Bookmark not defined.7

Ա. Օրենսդրական դաշտը 17

Բ. Գրանցված կուսակցությունների դաշինքները և թեկնածուները 18

Գ. Թեկնածուների գրանցման մերժումը 19

VII. Ընտրական քարոզարշավը 20

VIII. Լրատվամիջոցները 22

Ա. Լրատվամիջոցների պատկերը 22

Բ. Օրենսդրական դաշտը
2222

Գ. Լրատվամիջոցների մոնիտորինգը
2323

IX. Բողոքների և բողոքարկումների գործընթացը 25

X. Կանանց մասնակցությունը 26

XI. Տեղական դիտորդները 26

XII. Քվեարկության և հաշվման դիտարկումը 27

Ա. Քվեարկությունը 27

Բ. Հաշվումը 28

Գ. Արդյունքների աղյուսակավորումը 30

Դ. Նախնական արդյունքների հրապարակումը 30

Ե. Վերահաշվարկը 31

XIII. Մեծամասնական ընտրակարգով նոր ընտրությունները՝ 14-15 հունիսի 31

XIV. Դիմումները Սահմանադրական Դատարան և հետագա նոր ընտրությունները 33

XV. Ընտրությունների արդյունքները 34

Ա. Համամասնական ցուցակները 34

Բ. Մեծամասնական ընտրակարգը 35

Գ. Ազգային ժողովի վերջնական կազմը 35

XVI. Առաջարկությունները 36

Ա. Ընդհանուր առաջարկությունները 36

Բ. Օրենսդրական դաշտը 36

Գ. Ընտրությունների կազմակերպումը 38

Դ. Լրատվամիջոցները 39

Ե. Կանանց մասնակցությունը 39

Հավելված Ա. Համամասնական ընտրակարգով ընտրությունների վերջնական արդյունքները 40

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի մասին 42

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

25 մայիսի 2003թ.

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների Դիտորդական Առաքելություն

## ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ[1]

## I. ԱՄՓՈՓԻՉ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2003թ.-ի մայիսի 25-ին կայացած Հայաստանի Հանրապետության խորհրդարանական ընտրությունները 2003թ.-ի նախագահական ընտրություններից հետո հատկանշվեցին բարելավումներով քարոզարշավի և լրատվամիջոցների լուսաբանման առումով, սակայն դրանք չհամապատասխանեցին ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներին մի քանի կարևոր առումներով, մասնավորապես՝ ձայների հաշվարկի և աղյուսակավորման:

Բարելավումները կրկնեցին նման դեպքերի զարգացումը 1998թ.-ի և 1999թ.-ի նախագահական ընտրությունների ընթացքում: Երկրի քաղաքական առաջնորդները ուժեր գործադրեցին, որպեսզի ետ պահեն խախտումներից, սակայն ոճրագործները դարձյալ չենթարկվեցին պատասխանատվության: Իշխանությունները պետք է վերջ դնեն այս անպատժության մթնոլորտին, որպեսզի հստակորեն դիրքորոշվեն ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներին համապատասխանելու ուղղությամբ:

2002թ.-ին փոփոխություններ կրած Ընտրական Օրենսգիրքը հիմնականում ապահովում էր հիմք ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար: Սակայն, իրագործումը, մասնավորապես՝ ընտրական հանձնաժողովների կազմման բանաձևի առումով, պատշաճ կազմակերպման ակնկալիքները չարդարացրեց: Անկեղծ քաղաքական երկխոսությունը կարիք ուներ սահմանելու գործող մի բանաձև, որը կերաշխավորեր ընտրությունների նկատմամբ լիազորություններ ունեցող անձանց վստահությունը և ընտրական հանձնաժողովների պրոֆեսիոնալ և անաչառ աշխատանքը:

Ընտրական քարոզարշավը հիմնականում խաղաղ և հանգիստ էր, նկատվեցին ընդամենը առանձին բռնության դեպքեր: Բազմազան ընտրություն առաջարկվեց համամասնական մրցակցության մեջ, չնայած մրցակցությունը բացակայում էր մի քանի մեծամասնական մրցարշավներում: Հավասար հնարավորություններ տրվեցին քարոզարշավի համար, և հանրային հեռուստատեսությունը կատարեց իր իրավական պարտավորությունները՝ մրցակիցներին հավասար պայմաններ տրամադրելու հարցում: Ինչևիցե, մասնավոր հեռուստակայանները կողմնակալություն ցուցաբերեցին: Կանայք

[1] Սույն տարբերակը թարգմանված է անգլերենից, որը և հանդիսանում է միակ պաշտոնական փաստաթուղթը:

շարունակեցին մնալ որպես սակավ ներկայացված թեկնածուներ և քաղաքական կուսակցությունների ակտիվ գործիչներ:

Ընտրությունների կազմակերպման արդյունավետությունը խոչընդոտվեց կայունության, թափանցիկության և պրոֆեսիոնալիզմի պակասի պատճառով: Կարևոր որոշումները կայացվեցին ուշ և առանց բավականաչափ հստակության: Թեկնածուների, քաղաքական կուսակցությունների և դաշինքների գրանցման վերաբերյալ օրենսդրությունը կիրառվեց անհետևողականորեն և ընտրողական կարգով: Արդյունքների աղյուսակավորման գործընթացը թափանցիկ իրագործելու փորձերը՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի նախորդ հաշվետվություններում տրված հիմնական առաջարկը, խոչընդոտվեց Ընտրատարածքային Ընտրական Հանձնաժողովների (ԸԸՀ) օրենքին չհետևելու պատճառով: Չնայած որոշ համայնքներում ընտրացուցակները բարելավվեցին, հետագայում պահանջվեց դրանք ավելի բարձր ճշգրտության հասցնել:

Քվեարկությունը դիտորդների կողմից այցելած ընտրատեղամասերից շատերում որպես դրական գնահատվեց: Սակայն, խնդիրներ կային, որ շարունակ պետք է դիտարկվեին, ներառյալ ոչ լիազորված անձանց ներկայությունը ընտրատեղամասերում, անհամապատասխան սահմանափակումները կուսակցության կամ թեկնածուի ներկայացուցիչների նկատմամբ (վստահված անձանց) և բաց քվեարկությունները զինվորականների կողմից: Տեղական դիտորդները կրկին ներկայացված էին մեծ թվով, և նրանց իրավասությունը ավելի լայնորեն ճանաչվեց, քան նախագահական ընտրությունների ժամանակ: Ցավոք, կորստաբեր հրաձգություն տեղի ունեցավ մեկ ընտրատեղամասում, չնայած այն բանի, որ տվյալ դեպքը, կարծես թե, ընտրությունների հետ չէր առնչվում:

Դիտորդները լուրջ թերություններ նկատեցին ողջ հաշվարկի մեկ երրորդ դեպքերում: Խախտումների թվում ընդգրկվեցին քվեատուփերի լցոնումները, արդյունքների կեղծումները, ինչպես նաև դիտորդների և վստահված անձանց միջամտությունը: Ի պատիվ իշխանությունների, վերոհիշյալ խախտումները հիմնականում ճանաչվեցին և համապատասխան ձևով որոշ ուղղիչ քայլեր ձեռնարկվեցին, ներառյալ՝ մեծամասնական ընտրությունների երկրորդ անցկացումը հատուկ մտահոգություն առաջացնող երեք ընտրատարածքներում: Սակայն, դեռ պետք է տեսնել, արդյո՞ք օրինախախտները կենթարկվեն պատասխանատվության, թե ոչ: Հունիսի 14-15-ին կրկին անցկացված ընտրություններն ընդհանուր առմամբ լավացում ցուցաբերեցին մայիսի 25-ի ընտրություններից հետո, չնայած որոշ թերություններ դեռևս առկա էին:

Բողոքների և բողոքարկումների գործընթացը մնաց պահանջներին չհամապատասխանող և մտահոգող, ինչը հանգեցրեց անհարիր մեկնաբանությունների և օրենսդրության կիրառման: Սակայն, պաշտոնական բողոքների առնչությամբ գործ կազմելու ավելի մեծ պատրաստակամություն նկատվեց, և դատարանները ավելի մեծ անկախություն ցուցաբերեցին ընտրական հանձնաժողովների կողմից ընդունված սխալ որոշումները կասեցնելու հարցում: Ողջունելի է, որ Սահմանադրական Դատարանը շարունակաբար օբյեկտիվություն և անկախություն ցուցադրեց, չեղյալ համարելով երկու ընտրատարածքների արդյունքները և կարգադրելով նոր ընտրություններ անցկացնել, քանի որ ընտրական խախտումներն ազդեցություն էին ունեցել արդյունքների վրա:

Չնայած բարելավումների, հավաքած ձայների նշանակալից անկումը ցույց տվեց, որ քաղաքական կուսակցությունները և լայն հասարակությունը քիչ էին վստահում

ընտրական գործընթացին: Ընտրություններին հաջորդող ԺՀՄԻԳ-ի և ԵԱՀԿ-ի Խորհրդարանական Վեհաժողովի Հայաստան այցելության ժամանակ՝ 2003 թ.-ի հուլիսին, իշխանությունները իրավական դաշտը և ընտրությունների անցկացումը բարելավելու ցանկություն հայտնեցին: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը պատրաստ է աջակցել և առաջարկներ է անում, որոնց պետք է արագ անդրադառնալ, եթե վստահության հարցը վերականգնման կարիք ունի :

## II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի Ընտրությունների Դիտորդական Առաքելությունը (ԸԴԱ) Հայաստանի Հանրապետության 2003թ.-ի խորհրդարանական ընտրությունների համար հաստատվել է ի պատասխան Արտաքին Գործերի Նախարարության հրավերքի: ԸԴԱ-ը, Դեսպան Ռոբերտ Բարրիի (ԱՄՆ) ղեկավարությամբ, կազմված էր 28 ընտրական փորձագետներից և երկարաժամկետ դիտորդներից՝ ներկայացած ԵԱՀԿ-ի 17 մասնակից պետություններից, հիմնադրվել է Երևանում և յոթ այլ շրջկենտրոններում: ԸԴԱ-ը աշխատանքները սկսել է ապրիլի 25-ին և մնացել է երկրում մինչև հունիսի 18-ը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն նույնպես տեղի ունեցավ մայիսի 25-ին: ԸԴԱ-ը չի դիտարկել հանրաքվեի գործընթացը:

Ընտրության օրը, ԸԴԱ-ը միացավ ԵԱՀԿ-ի Խորհրդարանական Վեհաժողովին (ԵԱՀԿ ԽՎ) և Եվրախորհրդի Խորհրդարանական Վեհաժողովին (ԵԽԽՎ)՝ Ընտրությունների Միջազգային Դիտորդական Առաքելություն (ԸՄԴԱ) ստեղծելու նպատակով: Պրն. Ջովաննի Քեսսլերը (Իտալիա), Խորհրդարանի անդամ, Գրասենյակի Նախագահի կողմից նշանակվեց որպես իր Հատուկ Ներկայացուցիչը Հայաստանի խորհրդարանական ընտրությունների համար և ԵԱՀԿ ԽՎ պատվիրակության ղեկավար:[2] ԵԽԽՎ-ի պատվիրակության ղեկավարն էր Լորդ Ռասսըլ-Ջոնսթընը (ՄԹ): Ընտրության օրը 180 դիտորդ 25 ԵԱՀԿ անդամ-պետություններից ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից բաշխվեցին որպես կարճաժամկետ դիտորդներ: ԵԱՀԿ ԽՎ-ի պատվիրակությունը կազմված էր 9 խորհրդարանական դիտորդներից՝ 5 ԵԱՀԿ-ի անդամ-երկրներից: ԵԽԽՎ-ի պատվիրակությունը բաղկացած էր 16 խորհրդարանական դիտորդներից՝ 9 Եվրախորհրդի անդամ-պետություններից:

ԸՄԴԱ-ը ցանկանում է իր երախտիքը հայտնել Արտաքին Գործերի Նախարարությանը, Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովին (ԿԸՀ), իշխանության այլ ներկայացուցիչների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանում գործող դեսպանատներին և միջազգային կազմակերպություններին, դիտարկումների ընթացքում ցուցաբերած համագործակցության և աջակցության համար:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը նաև ցանկանում է շնորհակալություն հայտնել Դեսպան Ռոյ Ռիվին և Երևանի ԵԱՀԿ-ի գրասենյակին՝ առաքելության ողջ ընթացքում աջակցություն ցուցաբերելու համար:

[2] Պրն. Քեսսլերը 2003թ. հուլիսին ընտրվեց ԵԱՀԿ ԽՎ-ի փոխնախագահ:

## III. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

1991թ.-ի Հայաստանում անկախություն հռչակելուց հետո, մայիսի 25-ին տեղի ունեցած ընտրությունները երրորդն էին, իսկ 2001թ.-ի հունվարին Եվրախորհրդին միանալուց հետո՝ առաջինը: Նախորդ ընտրությունները Հայաստանում, այդ թվում և 2003թ.-ի փետրվարին և մարտին երկու փուլով անցկացված նախագահական ընտրությունը, ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներին չէին համապատասխանում:

1999թ.-ի մայիսին տեղի ունեցած վերջին խորհրդարանական ընտրություններից ի վեր, Հայաստանի քաղաքական պատկերը մեծ վերադասավորումներ է ապրել, և դա արտացոլվեց 2003թ.-ի մայիսի 25-ի ընտրությունների համամասնական ցուցակով մրցակից կուսակցությունների և դաշինքների տեսքով:

Այս վերադասավորման հիմնական պատճառը 1999թ.-ի հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովի վրա գործած հարձակումն էր, որի արդյունքում սպանվեցին վարչապետը, խորհրդարանի խոսնակը և վեց այլ խորհրդարանականներ: Սպանությունների համար մեղավորներին որոշելու հարցերը հանգեցրին «Միասնություն» դաշինքում համագործակցող «Հանրապետական Կուսակցության» և «Հայաստանի ժողովրդական Կուսակցության» պառակտմանը, մինչդեռ դաշինքը 1999թ.-ի ընտրություններից հետո մուտք էր գործել Ազգային ժողով որպես ամենամեծ ֆրակցիա: «Հայաստանի ժողովրդական Կուսակցությունը» մտավ ընդդիմության շարքերը: Ավելի ուշ, նույն հարցերը դեր խաղացին, որպեսզի «Հանրապետական Կուսակցությունից» անջատվի ընդդիմադիր «Հանրապետություն» կուսակցությունը: «Հանրապետական Կուսակցությունը» մնաց ղեկավարող դիրքերում՝ կուսակցության առաջնորդ Անդրանիկ Մարգարյանի ղեկավարությամբ, ով 2000թ.-ի մայիսից զբաղեցնում է վարչապետի պաշտոնը: «Հայ Հեղափոխական Դաշնակցությունը» (ՀՅԴ) նույնպես ներկայացված էր կառավարությունում, սակայն «Հանրապետական Կուսակցության» հետ պաշտոնապես կոալիցիայի մեջ չեր մտնում:

Դեպքերի զարգացման առանձին օրինակ է «Իրավունք և միաբանություն» ֆրակցիայի երկու մրցակից կուսակցությունների պառակտումը, որոնք 1999թ.-ի խորհրդարանական ընտրություններից հետո խորհրդարան մտան որպես ընտրական դաշինք: Հետագայում պառակտվեցին երկու կուսակցություններ այն չորսից, որոնք 1999թ.-ին համամասնական ցուցակով տեղեր զբաղեցրեցին խորհրդարանում: «Կոմունիստական Կուսակցությունը» բաժանվեց երկու, իսկ «Ազգային ժողովրդավարական Միությունը»՝ չորս կուսակցությունների: Հետևաբար, 1999թ.-ի համամասնական ցուցակով ընտրված վեց խորհրդարանական ֆրակցիայից միայն երկուսը՝ ՀՅԴ-ը և «Օրինաց Երկիրը» մնացին անպառակտելի հեռացող խորհրդարանի ողջ մանդատի ընթացքում:

Կուսակցությունների մեկ այլ վերադասավորում, որն ազդեց մայիսի 25-ի ընտրությունների վրա, դա՝ 2003թ.-ի նախագահական ընտրությունն էր: Այն կուսակցությունները, որոնք սատարում էին նախագահի թեկնածու Ստեփան Դեմիրճյանին երկրորդ փուլում՝ ընդդեմ գործող նախագահ և վերջնական հաղթող Ռոբերտ Քոչարյանի, միավորեցին ուժերը որպես «Արդարություն» դաշինք:

## IV. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ

### Ա. Հիմնական ուրվագիծը

Խորհրդարանական ընտրությունների օրենսդրական դաշտը բաղկացած էր 1995թ.-ի Սահմանադրությունից, Ընտրական Օրենսգրքից (ընդունված 1999թ.-ին և փոփոխված 2002թ.-ին), Քաղաքացիական Դատավարության Օրենսգիրքը, Քրեական Օրենսգիրքը, Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի (ԿԸՀ) որոշումները և այլ օրենքներ: Դրանց հավելյալ, Սահմանադրական Դատարանի որոշումները պայմանավորեցին մեկնաբանությունների բաղդատումը օրենսդրության հետ:
Սահմանադրությունը նախատեսում է Ազգային ժողովի 131 պատգամավորների ընտրություն յուրաքանչյուր 4 տարին մեկ: 2002թ.-ի փոփոխություններից հետո, Ընտրական Օրենսգիրքը նախատեսում է, որ պատգամավորներն ընտրվեն համածայն համախառն ընտրական համակարգի, յոթանասունհինգ տեղերով՝ բաշխված համամասնական հիմքերով այն կուսակցությունների կամ դաշինքների միջև, որոնք մեծամասնական ընտրակարգով հավաքում են ողջ ձայների ավելի քան 5%-ը, իսկ հիսունվեց պատգամավորներն ընտրվում են միամանդատ մեծամասնական ընտրատարածքներում՝ միափուլ մեծամասնական ընտրակարգով: Դա նախկին խորհրդարանի ճիշտ հակառակ համակարգն է, որը նախատեսում էր 75 մեծամասնական և 56 համամասնական տեղեր: Կառավարական մարմինները և քաղաքական կուսակցությունները, ողջ սպեկտրով, քննադատեցին մեծամասնական համակարգը՝ գործող թեկնածուների առանձին տնտեսական շահերի և թույլ և տարանջատ խորհրդարանին օժանդակելու առումով: Խոսակիցներից շատերին կոչ արվեց ձևափոխել մեծամասնական համակարգը՝ ընտրատարածքների թիվը նվազեցնելով, կամ բոլորը վերացնելով:

### Բ. Օրենսդրական դաշտի գնահատումը

Օօրենսդրական դաշտը հիմնականում ինքնուրույն հիմք է նախատեսում ընտրություններն միջազգային չափանիշներին համապատասխան անցկացնելու համար: Սակայն, օրենսդրության պրակտիկ կիրառումը 2003թ.-ի խորհրդարանական ընտրությունների ընթացքում, և մյուս վերջերս տեղի ունեցած ընտրությունների ժամանակ, Ընտրական Օրենսգրքում առկա բազմաթիվ թերություններ մերկացրեց, որոնք նպաստեցին ընտրությունների միջազգային չափանիշներին համապատասխանելու ձախողմանը: Այդ թերություններից շատերը նշված են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2003թ.-ի նախագահական ընտրությունների վերաբերյալ վերջնական հաշվետվության մեջ:[3]

ԿԸՀ-ի և ԸԸՀ-րի անդամները նշանակվել էին համածայն Ընտրական Օրենսգրքի մի բանաձևի, ըստ որի երեք անդամները նշանակավում են նախագահի կողմից, և մեկական անդամ՝ 1999թ.-ին խորհրդարանական ընտրություններից հետո հաստատված վեց խորհրդարանական ֆրակցիաների կողմից: Ինչպես և 2003թ.-ի նախագահական ընտրությունների ժամանակ, այս բանաձևը, որը ենթադրում է նախատեսել քաղաքական շահերի արդյունավետ հավասարակշռություն, ձախողվեց այս առումով՝ թե համամասնական, և թե մեծամասնական մրցակցության մեջ: Ըստ մի բանաձևի, Տեղամասային Ընտրական Հանձնաժողովների (ՏԸՀ) անդամները նշանակվեցին առանձին ԸՏՀ անդամներին ներկայացնելու համար: Սույն բանաձևը նույնպես թերի

[3] Հրապարակված է 2003թ. ապրիլին: Տես՝ www.osce.org/odihr/electionreports

գտնվեց քաղաքական հավասարակշռությունը ընտրատեղամասերում երաշխավորելու համար:

Ընտրական Օրենսգիրքը չի պահանջում անկախության և պրոֆեսիոնալիզմի համապատասխան մակարդակ ընտրական հանձնաժողովների աշխատանքում: Հանձնաժողովի անդամները ընդամենը պարտավոր են գործունեություն իրականացնել «կոլեգիալության սկզբունքով» (Հոդված 39.1), ոչ բավարար իրավական պահանջով՝ աշխատել անաչառ, պատասխանատու և թափանցիկ ձևով: Ընտրական հանձնաժողովի ժողովները կարող են անցկացվել 50 տոկոս քվորումով, ներկա հինգ անդամների մասնակցությամբ, իսկ որոշումներն ընդունվում են, եթե այդ տոկոսի կեսը կողմ է: Այսպիսով, կարևոր որոշումները կարող են ընդունվել միայն երեք անդամների կողմից, ինչը, ելնելով լայնորեն տարածված պայմանավորվածությունից, չի համապատասխանում որոշում կայացնելու ապահով գործընթացին:

Ընտրական Օրենսգիրքը չի նախատեսում հատուկ ընթացակարգեր ընտրական վեճերի ազնիվ և թափանցիկ լուծման համար: Հոդված 40-ի համապատասխան կետերը կազմված են անբավարար ձևով և պարզ չեն սահմանում թե ինչ ընթացակարգեր պետք է կիրառվեն ընտրական գործընթացում շահ ունեցող անձանց կողմից խախտումները, կամ ընտրական հանձնաժողովների որոշումները բողոքարկելու համար: Չկա պահանջ ընտրական հանձնաժողովի նկատմամբ բողոքը հաշվի առնել քվորումի, կամ բողոքը ներկայացնողի ներկայության դեպքում: Փաստորեն, սա թույլ է տալիս, որպեսզի բողոքների նկատմամբ որոշումներ ընդունվեն ընտրական հանձնաժողովի առանձին անդամների կամ վարչական աշխատակազմի կողմից՝ առանց հանձնաժողովի պաշտոնական քվեարկության:

Ըստ Ընտրական Օրենսգրքի Հոդվածներ 41 (11) և 42 (7), վերադաս ընտրական հանձնաժողովները լիազորություն ունեն «վերացնելու» ստորադաս հանձնաժողովի որոշումը: Սակայն, նախատեսված չեն հետագա քայլերը՝ այն է. արդյոք ստորադաս հանձնաժողովը պետք կրկին որոշում կայացնի, թե վերադաս հանձնաժողովը կիարկադրի իր սեփական որոշումը: Հիմնական մտահոգությունն այս առումով այն է, որ ՏԸՀ-ը կամ ԿԸՀ-ը ոչ մի լիազորություն չունեն արդյունքներն անվավեր ճանաչելու այն ընտրատեղամասերում, որտեղ խախտումներ են տեղի ունեցել: Նման դեպքերում ընտրական հանձնաժողովների ընթացիկ պրակտիկան է պարզապես կարգադրել «ստուգումներ» կատարել (այսինքն՝ վերահաշվարկ), ինչը բավարար հատուցում չէ բողոքների նկատմամբ, որոնք հիմնված են քվեարկության և հաշվարկման խախտումների վրա, ինչպիսիք են քվեատուփերի լցոնումները:

Ընտրական հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել առաջին ատյանի դատարանում, սակայն ոչ ավելի բարձր ատյանում: Հոդված 40-ը նախատեսում է, որ թեկնածուների գրանցման հետ կապված գործերը բողոքարկվեն վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, սակայն դա հակասում է Քաղաքացիական Դատավարության Օրենսգրքի Հոդված 155 (2)-ին, որը համարվեց պարտավորեցնող:[4] Առաջին ատյանի դատարանի որոշումների բողոքարկման ոչ լիարժեք իրավունքը Հայաստանի տարածքում բերեց խորհրդարանական ընտրությունների ընթացքում օրենքի

---

[4] Սահմանադրական Դատարանը (2003թ. հունիս) դրանից հետո կայացրել է, որ բողոքարկման իրավունքը գոյություն ունի՝ դրանով իսկ, փաստորեն, չեղյալ համարելով Քաղաքացիական Դատավարության Օրենսգրքի դրույթները:

անհամապատասխան մեկնաբանությունների և կիրառման, օրինակ՝ թեկնածուների գրանցմանը վերաբերող դեպքերում:

Ընտրական Օրենսգիրքը չի նախատեսում համապատասխան սանկցիաներ ընտրական խախտումների նկատմամբ: Մինչ Հոդված 139 քրեական պատասխանատվության է ենթարկում մի քանի գործողությունների համար, Օրենսգիրքը չի անդրադառնում այն հատուկ քայլերին, որոնք պետք է ձեռնարկվեն ընտրական հանձնաժողովի կողմից այն թեկնածուների կամ կուսակցությունների/դաշինքների նկատմամբ, որոնք ընտրության օրը ընտրական խախտումներ են կատարել: Առկա են բացառիկ լիազորություններ, որոնք թույլ են տալիս թեկնածուի կամ կուսակցության/դաշինքի գրանցումը անվավեր համարել, ինչը կանխում է նրանց հետագա մասնակցությունը ընտրություններին, բայց այդպիսի միջոցները միշտ չէ, որ տեղի են:[5]

Ընտրական Օրենսգրքի բավարար պահանջներ չի նախատեսում նախնական և վերջնական արդյունքների պատասխանատու և թափանցիկ աղյուսակավորման և հրապարակման համար: ԿԸՀ-ը չունի իրավական պարտավորություն թե նախնական, և թե վերջնական արդյունքները հրապարակելու՝ տրոհված ըստ ընտրատեղամասերի: Ավելին, չնայած Հոդված 42 (8) պահանջում է ԸԸՀ-ից հրապարակայնորեն փակցնել նախնական արդյունքներն այդ ձևով, այդ իրականացնելու համար վերջնական ժամկետը նշված չէ: Որպեսզի ձայների հաշվարկը և աղյուսակավորումը լինի թափանցիկ, այդ տվյալները կարող են, և պետք է հրապարակվեն անմիջապես և այդ ֆորմատով ուղարկվեն ԿԸՀ-ին:

Դիտորդների և վստահված անձանց (այսինքն, քաղաքական կուսակցությունների/դաշինքների կամ թեկնածուների լիազորված ներկայացուցիչների) իրավունքները և պատասխանատվությունները հստակորեն արտահայտված են Ընտրական Օրենսգրքում Հոդված 30 (5)-ով, որը հաստատում է «վստահված անձի, դիտորդի…իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում»: Սակայն, ԿԸՀ-ի 2002 թ.-ի օգոստոսին կայացրած որոշումը սահամանափակեց վստահված անձանց իրավունքները՝ կաշկանդելով նրանց շարժումը ընտրատեղամասերի ներսում: Այդ որոշումը, որը թույլ է տալիս ընդամենը մեկ վստահված անձի մեկ անգամ շարժվել ընտրատեղամասի շուրջը, փոխզիջում է վստահված անձանց հնարավորությանը՝ դիտարկել քվեարկության և հաշվարկման ընթացակարգերը, հետևաբար, նվազեցնում է գործընթացի թափանցիկությունը:

Յուրաքանչյուր ընտրատարածքում գրանցված ընտրողների թիվը չի կարող տարբերվել ավելի քան 15 տոկոսով: Սակայն, Ընտրական Օրենսգրքի Հոդված 17 (1.1)-ը չի սահմանում այն ընթացակարգը, որ պետք է գործադրվի այդ տարբերությունների հաշվարկելու համար: Անհնար է հաստատել, արդյո՞ք մեծածավալ փաստացի տարբերությունները, որոնք գոյություն ունեն ընտրատարածքների միջև, գտնվում են օրենքով թույլատրելի սահմաններում:

Ընտրողներին թույլատրվում է քվեարկել միայն այն ընտրատեղամասերում, որտեղ նրանց անունները ներառված են ընտրացուցակներում: Սա արգելք է հանդիսանում այն

[5] Այսինքն՝ հոդված 18-ի 7 և 8 կետերը, որոնք արգելում են ապրանքների և ծառայությունների առաջարկումը թեկնածուների կողմից ընտրապայքարի ընթացքում, ինչի համար գոյություն ունի միայն մեկ սանկցիա, այն է՝ թեկնածուին կամ կուսակցությունը/դաշինքը գրանցումից հանելը:

ընտրողների համար, որոնք գտնվում են հիվանդանոցներում, փակված են տներում, ժամանակավորապես հեռացած են իրենց տեղայնքից, կամ ի վիճակի չեն այցելել իրենց ընտրատեղամաս (օրինակ, հերթապահ ոստիկանը): Եվ հակառակը, այն գրանցված ընտրողներին, որոնք գտնվում են արտերկրներում, և զինծառայողներին հնարավորություն տրվեց քվեարկել, չնայած միայն համամասնական կարգով անցկացվող ընտրություններին:

Ընտրական Օրենսգրքի խստությունը՝ հավասար հնարավորությունների երաշխիքն է այն անձանց համար, որոնք հաշմանդամ ընտրողներ էին հանդիսանում: Դրան գումարած, ԿԸՀ-ի որոշումը պահանջեց ընտրատեղամասերը տեղակայել մոտակա տարածքներում, որպեսզի բոլոր ընտրողներն ունենան հեշտ մոտենալու հնարավորություն:[6] Սակայն, ընտրատեզամասերի ավելի քան կեսը՝ ընտրության օրը ԸՄԴԱ-ն դիտորդների կողմից այցելած, մատչելի չէին հաշմանդամների համար:

Ընտրական Օրենսգիրքը վերանայման կարիք ունի, որպեսզի ընդգրկվեն Սահմանադրական Դատարանի այն որոշումները, որոնք լրացրել են ընտրական օրենսդրությունը: Հետագայում, բազմաթիվ դեպքեր կան, որտեղ տեքստը կարիք ունի ոճական փոփոխման: Մի քանի իրավական դրույթներ թերի են տեխնիկական մանրամասնությունների առումով, մասնավորապես՝ ընտրական նյութերի արտադրման վերաբերյալ և այն հատուկ ընթացակարգերի, որոնց պետք է հետևել, երբ առանձին ընտրություններ անց են կացվում նույն օրը, հատկապես՝ քվեատուփերի գործածման առումով: Ժամանակակից ընթացակարգեր են պահանջվում նաև այն ընտրողների քաղաքական ընտրությունը հաշվի առնելու համար, որոնք «բոլորին դեմ» են քվեարկել:

## Գ. Պատասխանատվության ենթարկումը օրենսդրության խախտումների համար

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը մինչ այդ բավականին լրջորեն զգուշացրել էր իրավական դաշտի հետ կապված լուրջ խնդիրների մասին, որոնք իշխանությունների կողմից դրույթների խստացման և օրինախախտ անձանց պատասխանատվության ենթարկելու ձախողումն էր: 2003թ.-ի նախագահական ընտրությունների ընթացքում, լայնատարած ընտրական խախտումներ տեղի ունեցան, որոնցից շատերը գրանցվեցին միջազգային դիտորդների կողմից: Ավելին, մոտ 30 բողոք՝ օրենքի քրեական խախտումների հետ կապված, ներկայացվեցին ԿԸՀ-ին և/կամ գլխավոր դատախազություն: Ընտրական արդյունքների վեճերը վարելիս, Սահմանադրական Դատարանը նույնպես համարեց, որ խախտումներ են տեղի ունեցել 40 ընտրատեղամասերում և կարգադրեց գլխավոր դատախաղությանը հետաքննություն անցկացնել: Որպես հետևողական քայլ, ԸԴԱ-ը նախագահական ընտրությունների ժամանակ ուշադրությամբ դիտարկեց այն ընթացակարգերը, որոնց միջոցով իշխանությունները պետք է պատասխանատվության ենթարկեին նախորդ անգամ խախտումներ կատարողներին:

Ընտրությունների հետ կապված ոչ մի պաշտոնյա պատասխանատվության չենթարկվեց. ոչ քրեորեն, ոչ էլ վարչական պատժամիջոցով՝ նախագահական ընտրությունների ժամանակ Ընտրական Օրենսգրքի խախտման մեջ իրենց ունեցած դերի համար: Անշուշտ, որոշ ԸԸՀ-ըի, որտեղ բազմաթիվ խախտումներ էին տեղի ունեցել, հանձնաժողովների ավագ անդամները, ինչպիսին էր ԸԸՀ 29-ի նախագահը,

[6] ԿԸՀ-ի 2002թ., 20 նոյեմբերի որոշում:

մնացին իրենց գրասենյակներում՝ խորհրդարանական ընտրությունները կազմակերպելու ողջ պատասխանատվությունը պահպանելով: Չնայած ԸԴԱ-ի դիտորդները հայտնեցին երկու ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում առանձին ՏԸՀ-րի անդամների փոխարինման բազմաթիվ դեպքերի մասին, ոչ մի նշում չկար, որ փոխարինումը սահմանափակված էր այն ընտրատեղամասերում, որտեղ տեղի էին ունեցել խախտումները: Իհարկե, դիտորդները նկատեցին դեպքեր, երբ ՏԸՀ-ի անդամները, որոնք պատասխանատու էին խախտումների համար, պարզապես տեղափոխվել էին այլ ընտրատեղամասեր կամ հարևանությամբ գտնվող ԸԸՀ-ր: Միակ գրանցված դեպքը, երբ անձինք կանչվել էին պատասխանատվության, վերաբերում էր ոստիկանության ութ սպաների, որոնց չէր հաջողվել կանխել գրոհումը քարոզարշավի հանրահավաքի ժամանակ:

Հատուկ մտահոգություն է առաջացնում, որ գլխավոր դատախազությանը չհաջողվեց իրեն ուղղված բողոքների քննության համար արդյունավետ քայլեր ձեռնարկել: Մինչ կասկածելիները ձերբակալվեցին Քրեական Օրենսգիրքը խախտելու համար, Ընտրական Օրենսգրքի խախտումների քննությունը, ինչպիսիք էին քվեատուփերի լցոնումները, կամ մնացին նախնական փուլերում, կամ փակվեցին, հիմնավորվելով փաստերի բացակայությամբ:

Համապատասխան իշխանությունների կողմից նախագահական ընտրությունների ընթացքում ընտրախախտումների նկատմամբ միջոցներ չձեռնարկելը խարխլեց Հայաստանում անցկացվող ընտրությունների հավաստիությունը և հանրության վստահությունը դրանց նկատմամբ: Ավելին, այսպիսի անգործությունը նպաստեց, որպեսզի ընտրությունների հետ կապված պաշտոնյաներն անպատժելիության զգացում ունենան, և դա բերեց Ընտրական Օրենսգրքի նոր խախտումների խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Օրինախախտների նկատմամբ ավելի արդյունավետ և պատշաճ գործողություն ձեռնարկելու համար, Ընտրական Օրենսգիրքը պետք է փոփոխություն կրի, որպեսզի թույլ տա հեռացնել ընտրությունների հետ կապված այն պաշտոնյաներին, որոնց վերադաս ընտրական հանձնաժողովը պատասխանատու կհամարի ընտրախախտումների համար, կամ որոնք թույլ են տվել, որպեսզի այդ խախտումները տեղի ունենան:

Ավելի դրական էր, համենայնդեպս, Սահմանադրական Դատարանի դերը ընտրողների և թեկնածուների իրավունքները պաշտպանելու հարցում՝ նախագահական ընտրությունից հետո: Դատարանը ընտրության արդյունքների հետ կապված վեճերի նկատմամբ ակտիվ և անկախ մոտեցում ցուցաբերեց: Հետագայում, խորհրդարանական ընտրության քարոզարշավի ընթացքում, անկեղծորեն ուժեր գործադրվեցին բարձրաստիճան ղեկավարների կողմից, որպեսզի նախագահական ընտրությունները ստվերող որոշ թերություններ կրկին ի հայտ չգան: Մասնավորապես, պաշտոնատար անձինք սատարեցին, որպեսզի ընտրական վարչակազմն ընդունի մի քանի առաջարկներ, որոնք տեղ էին գտել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի նախորդ հաշվետվություններում: Այդ քայլերը մեծ ներդրում հանդիսացան այն բարելավումների գործում, որոնց մասին նշվում է սույն հաշվետվության մեջ:

## V. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ընտրությունները կազմակերպված էին հանձնաժողովների եռաստիճան կառույցի կողմից. ԿԸՀ, 56 ԸԸՀ և մոտ 1.885 ՏԸՀ: Մոտավորապես 35 ընտրատեղամասեր էին նաև ստեղծվել Հայաստանի հյուպատոսական առաքելությունների ներքո: Մինչ ՏԸՀ-ը իրենցից ներկայացնում են ժամանակավոր մարմիններ՝ նախատեսված ընտրությունների ժամանակաշրջանի համար, ԿԸՀ-ի և ԸԸՀ-ի գործունեությունը մշտական է՝ 4 տարվա ժամկետով: Հանձնաժողովի նոր անդամները գրասենյակի պատասխանատվությունները ստանձնեցին 2003թ.-ի հուլիսի10-ին:

## Ա. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

Բոլոր ընտրական հանձնաժողովները բաղկացած էին ինը անդամից՝ նշանակված վերոհիշյալ բանաձևի համաձայն (տես՝ բաժին IV. Օրենսդրական դաշտ): 1999թ.-ի խորհրդարանական ընտրություններից հետո հաստատված վեց ֆրակցիայից միայն երկուսը մնացին անեղծ անցյալ խորհրդարանի ողջ մադնատի ընթացքում: Սակայն, ընթացակարգերի խորհրդարանական կանոնները, որոնք արգելում են նոր խորհրդարանական ֆրակցիաների ձևավորումը, ենթադրում էին, որ այդ վեց ֆրակցիաները ընտրական հանձնաժողովներին անդամակցության նպատակով կշարունակեն իրենց գոյությունը սկզբնական ձևով:

Որպես հետևանք, «Միասնության» բոլոր ներկայացուցիչները ընտրական հանձնաժողովներում գալիս էին կառավարող «Հանրապետական Կուսակցությունից», որը պատգամավորների մեծամասնությունն ուներ նախորդ դաշինքից: «Հայաստանի ժողովրդական Կուսակցությունը», այդպիսով, չունեցավ պաշտոնական ներկայացուցչություն որևէ հանձնաժողովում: Նմանապես, երկու այլ ֆրակցիաների՝ «Կոմունիստական Կուսակցության» և «Ազգային ժողովրդավարության Միության», կողմից նշանակված բոլոր անձինք գալիս էին սկզբնական կուսակցություններից մնացած առաջնորդներից և չընդգրկեցին իրենց տարանջատման հետևանքով առաջացած հինգ նոր կուսակցությունների ներկայացուցիչներին: Սակայն, «Իրավունք և Միաբանություն» դաշինքը համամասնորեն բաշխեց հանձնաժողովի անդամների նշանակումները իր երկու մրցակից կուսակցությունների միջև՝ նախքան դրանց տարանջատումը, ինչը պահպանվեց առանձին կուսակցությունների կողմից:

Հակառակ 2003թ.-ի նախագահական ընտրության երկրորդ փուլին, այս բանաձևը ի վիճակի եղավ նվաճել առաջատար ընդդիմադիր քաղաքական ուժի սահմանափակ ներկայացուցչությունը ընտրական հանձնաժողովներում: «Արդարություն» դաշինքը, որն ընդգրկել էր «Հայաստանի ժողովրդական Կուսակցությունը», ներկայացվեց «Ազգային ժողովրդավարության Միության» կողմից նշանակված անձերով: Ավելին, ԸԸՀ-ի համարյա մեկ երրորդ հանձնաժողովներում «Արդարություն» դաշինքը նաև ներկայացված էր իր այլ անդամակցող կուսակցության կողմից նշանակված անձերով («Սահմանադրական Իրավունքի Միավորումը», որը որոշ առաջադրումներ կատարեց նախկին «Իրավունք և Միաբանություն» ֆրակցիայից): Այնուամենայնիվ, ԿԸՀ-ի և յուրաքանչյուր ԸԸՀ-ի անդամների *de facto* մեծամասնությունը մնաց ներկայացնող նախագահական վարչակազմը և կառավորության երկու կուսակցությունները:

ԿԸՀ-ի կազմավորումը հիմնականում կատարվեց իրավական ժամկետի սահմաններում: ՏԸՀ-ի անդամների նշանակման բանաձևը նույնպես նպատակ ուներ նվաճելու, սակայն չերաշխավորեց, տարբեր խորհրդարանական ֆրակցիաների ներկայացուցչությունը ամեն ընտրատեղամասում: Փաստորեն, համատարած էին այն դեպքերը, երբ ՏԸՀ-ի նշանակված անդամները չէին արտացոլում այն քաղաքական ներկայացուցչությունը, որ նախատեսված է օրենքով: ՏԸՀ-ի անդամներից շատերը, կարծես, տեղյակ չէին, թե որ ֆրակցիան իրենք պետք է ներկայացնեն: Անշուշտ, ԸԴԱ-ը տեղյակ է բազմաթիվ բողոքների մասին, որոնք պնդում են կաշառքների մասին՝ ՏԸՀ-ում պաշտոնների նշանակվելու համար: Սա հնարավոր չէր փաստերով հաստատել:

Քաղաքական կուսակցություններից շատերը և բազմաթիվ թեկնածուներ անվստահություն արտահայտեցին ընտրական վարչակազմի օբյեկտիվության, անկողմնակալության և թափանցիկության վերաբերյալ: Նշանակումների մեծ մասը ներկայացված էր Նախագահի և կառավարությունում ներկայացված երկու կուսակցությունների կողմից, ովքեր զբաղեցրել էին ԿԸՀ-ի և բացի մեկից բոլոր ԸԸՀ-րի նախագահական պաշտոնները՝ ինչը վստահություն չէր ներշնչում հանձնաժողովների աշխատանքների նկատմամբ: Միջազգային դիտորդների կողմից այցելած ՏԸՀ-րի 90 տոկոսից ավելի հանձնաժողովներում նախագահները նույնպես պրեզիդենտական նշանակումներ էին:

## Բ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ԿԸՀ-ը ստանձնեց վերահսկողության իրավասությունը ողջ խորհրդարանական ընտրությունների ընթացքում և հատուկ պատասխանատվություն համամասնական ընտրակարգով մրցակիցների ցուցակների կազմակերպմամբ: 56 ՏԸՀ-րը անմիջապես պատասխանատու էին իրենց ընտրատարածքներում մեծամասնական ընտրակարգով ընտրություններ անցկացնելու համար: ԸԸՀ-րի և ՏԸՀ-րի մեծ մասի համար ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիրը դասընթացներ անցկացրեց:

Ընդհանուր առմամբ, ընտրական հանձնաժողովները ընտրությունների պատրաստությունները ավարտեցին ժամանակին, չնայած որոշ ԸԸՀ-րի վրա ճնշումներ գործադրվեցին, որպեսզի հասցնեն ՏԸՀ-րի նշանակումները կատարել սահմանված ժամկետում և մատակարարեն ընտրական նյութերը: Ընտրական Օրենսգրքի դրույթները կատարելու նպատակով, ԿԸՀ-ը 100-հց ավելի որոշումներ կայացրեց, մեծամասամբ ժամանակին և բավականին մանրամասն բովանդակությամբ: Սակայն, ԿԸՀ-ի որոշումների հրապարակումը և տարածումը ստորադաս ընտրական հանձնաժողովների միջև և այլ պաշտոնատար մարմինների, որոնք լիազորություններ ունեին ընտրությունների անցկացման հետ կապված՝ ներառյալ թեկնածուները, սիստեմատիկ բնույթ չեր կրում:

Ինչպես և նախագահական ընտրությունների ժամանակ, ԿԸՀ-ը դրական որոշում ընդունեց թափանցիկ քվեատուփերի գործածման վերաբերյալ: Ինչևիցե, այդ որոշումն ընդունվեց շատ ուշ (մայիսի 12-ին): Ավելի վաղ (ապրիլի 30-ին) ԿԸՀ-ը որոշում էր կայացրել, որ միայն մեկ մեծ ծավալով քվեատուփ կգործածվի յուրաքանչյուր ընտրատեղամասում: Դա հիմնավորվում էր ԿԸՀ-ի այն մեկնաբանությամբ, թե օրենքն արգելում է մեկից ավելի քվեատուփ գործածել, չնայած դա, փաստորեն, անորոշ հարց է: Քանի որ մեծ թափանցիկ քվեատուփեր արտադրելու տեխնիկական հնարավորություններ չկային, ապրիլի 30-ի որոշումը նշանակում էր, որ քվեատուփերը

թափանցիկ լինել չեն կարող: Մայիսի 12-ին ԿԸՀ-ը փոխեց իր տեսակետը և կարգադրեց առանձին թափանցիկ քվեատուփեր օգտագործել խորհրդարանական ընտրությունների և հանրաքվեի քվեարկությունների համար: Մի քանի քաղաքական կուսակցություններ և ԸՂԱ-ը հրապարակայնորեն մեկնաբանեցին, որ ոչ թափանցիկ քվեատուփերի գործածումը կարող է նահանջի քայլ հանդիսանալ:[7]

Ընտրության պատրաստման ավելի ուշ փուլերում ԿԸՀ-ի կողմից կայացված բազմաթիվ կարևոր որոշումներ բավարար չափով մանրամասնած չէին: Օրինակ, ընտրատեղամասերում մեկից ավելի քվեատուփեր գործածելու վերաբերյալ որոշումը չէր սահմանում քվեարկության և հաշվարկման ընթացակարգերը, որպեսզի հաշվի առնվեին նոր քվեատուփերի հետ կապված պատրաստությունները, կամ այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեին չհաշվարկված քվեաթերթիկների ընդգրկումը երաշխավորելու համար: Դա բերեց ընտրության օրվա ընթացքում ոչ միանման իրագործման:

Որպես դրական քայլ հանդիսացավ ԿԸՀ-ի պաշտոնական հրահանգը ԸԸՀ-ին՝ հետևել Ընտրական Օրենսգրքի Հոդված 42 (8)-ի օրինական պահանջին և հրապարակել համամասնական և մեծամասնական մրցակցության նախնական արդյունքները՝ տրոհված ըստ ընտրատեղամասերի: Նախկին ընտրությունների ժամանակ այս դրույթը ամենուրեք անտեսվել էր: Սակայն, այդ հրահանգը նույնպես ուշ տրվեց (մայիսի 22-ին) և ավելի շատ բանավոր կերպով ներկայացվեց, քան գրավոր:

ԿԸՀ-ի Նախագահը իր վրա անձնական պարտավորություն վերցրեց համամասնական ընտրակարգով ընտրությունների նախնական արդյունքների հրապարակումը, տրոհված ըստ ընտրատեղամասերի՝ ԸՄԴԱ-ի հիմնական առաջարկներին համաձայն գործելու նպատակով: Սակայն, նա իր պարտավորությունը լիարժեք կերպով չկատարեց:

Ընտրական Օրենսգրքի դրույթները կիրառվեցին ԸԸՀ-ի կողմից անհամապատասխան ձևով: Մասնավորապես, թեկնածուների գրանցումը ձեռնարկվեց տարբեր չափանիշներից ելնելով՝ կապված սեփականության հետ, քաղաքացիության և ֆինանսական հարցերի: ԿԸՀ-ը, լինելով պատասխանատու «[Ընտրական] Օրենսգրքի հավասար հիմունքներով կիրառման» համար, չկարողացավ բավարար ուղղություններ տրամադրել թեկնածուների գրանցման վերաբերյալ, որպեսզի ԸԸՀ-ի միջև մրցակցություն երաշխավորի:

2003թ.-ի ապրիլին Սահմանադրական Դատարանի կողմից ընդունված որոշումներից հետո՝ նախագահական ընտրությունների հետ կապված վեճերի մասին, ԿԸՀ-ից պահանջվեց ընտրական հանձնաժողովների համար նոր ընթացակարգային կանոնակարգ ընդունել՝ բողոքների և բողոքարկումների գործընթացի վերաբերյալ: Սակայն, այդ կանոնակարգը միայն պաշտոնական դարձրեց նախկինում առկա *ad hoc* ընթացակարգերը, որոնք քննադատության էին ենթարկվել Դատարանի կողմից:

---

[7] Մոտավորապես 3,400 թափանցիկ քվեատուփեր էին մատակարարվել Երևանի ԵԱՀԿ գրասենյակի կողմից խորհրդարանական ընտրությունների համար՝ միջազգային դոնորների աջակցությամբ: Դրանք գործածվեցին ի հավելումն 2000 թափանցիկ քվեատուփերի՝ նախկինում տրամադրված Երևանի ԵԱՀԿ գրասենյակի կողմից 2003թ. նախագահական ընտրությունների համար, որոնք գործածվեցին մայիսի 25-ին հանրաքվեի համար: Յուրաքանչյուր ընտրատեղամասին տրամադրվեց մեկ լրացուցիչ տուփ խորհրդարանական ընտրությունների քվեաթերթիկների համար: Ավելի մեծ ընտրատեղամասերը ստացան և երկրորդ քվեատուփը:

Հիմնական մտահոգությունը, կապված ընթացակարգերի հետ, կայանում է նրանում, որ դրանք թույլ են տալիս բողոքի վերաբերյալ որոշում կայացնել հանձնաժողովի միայն մեկ անդամի կողմից` առանց ամբողջական հանձնաժողովին դիմելու:

Վերադաս ընտրական հանձնաժողովի ողջ գործելակերպը, հիմնականում, ոչ լիովին էր թափանցիկ: ԿԸՀ-ի որոշումների մեծ մասը սահմանվում էին այդ հանձնաժողովի գործադիր պաշտոնյաների և քարտուղարության կողմից` պաշտոնական նիստերից դուրս, մինչդեռ ԿԸՀ-ի Նախագահը և Փոխնախագահը անընդհատ ոչ պաշտոնական ժողովներ էին անցկացնում առանձին ԸԸՀ-ների նախագահների հետ, որոնք անցնում էին փակ դռների ետևում: Չնայած ընդդիմության ներկայացուցիչները ընտրական հանձնաժողովներում շատ ավելի քիչ էին եզրային տեղ զբաղեցնում, քան 2003 թ.-ի նախագահական ընտրության ժամանակ, ԿԸՀ-ի և ԸԸՀ-ների նիստերը տևում էին կարճ, հազվադեպ էին և անց էին կացվում առանց բանավեճերի և քննարկումների: ԿԸՀ-ի բոլոր պաշտոնական նիստերը բաց էին վստահված անձանց, հավատարմագրված դիտորդների և լրատվամիջոցների համար: ԸԴԱ-ը տեղեկացավ մի քանի դեպքերի մասին, երբ վստահված անձանց ներկա գտնվելը ԸԸՀ-ների և ՏԸՀ-ների ժողովներին ծախողվել է այն պատճառով, որ նիստերի մասին պատշաճ կերպով չի հայտարարվել:

Ընդհանուր առմամբ, ԸԴԱ-ը մտահոգված էր անվտանգության միջոցների առումով, որոնք պետք է պահպանեին ընտրական նյութերի ամբողջականությունը: Այդ միջոցները` հատկապես քվեաթերթիկների և այլ հույժ կարևոր նյութերի տպագրմանը և բաշխմանը վերաբերող, բավարար չէին: Չնայած դրան, ոչ մի սխալմունք ԸԴԱ-ի կողմից չհաստատվեց: Ի տարբերություն նախագահական ընտրությունների, ԸԴԱ-ը դիտարկեց շատ քիչ դեպքեր, երբ քվեաթերթիկների հետ առնչվում էին դրսում:

## Գ. ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ

Ըստ Ընտրական Օրենսգրքի, ընտրացուցակների կազմելը և թարմացնելը` տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությունն է, որոնք կոչվում են համայնքներ[8]` ԿԸՀ-ի և ԸԸՀ-ների «հսկողության» ներքո: Յուրաքանչյուր ընտրացուցակ պետք է նաև ստորագրվի Հայաստանի Ոստիկանության Անձնագրային Բաժնի[9] ներկայացուցչի կողմից: Սակայն, Օրենսգիրքը բավարար կերպով չի մանրամասնել տարբեր գործակալությունների դերերը և ԿԸՀ- և ԸԸՀ-ների վերահսկողության չափը: Ավելին, խոսք չկա Ոստիկանության անձնագրային գրանցումների *de facto* կիրառման մասին, ինչը վճռական տվյալներ է տրամադրում ընտրացուցակները արդիացնելու համար: Հայաստանը չունի կենտրոնացված քաղաքացիների կամ քվեարկողների գրանցման մատյան, ոդպեսզի խուսափի հնարավոր բազմաթիվ մուտքագրումները համայնքի շրջանակներում:

Ինչպես և նախորդ ընտրությունների ժամանակ, ընտրացուցակների ճշգրտությունը մտահոգիչ էր և քաղաքական կուսակցություններից շատերը դրանց քիչ էին վստահում: ԸԴԱ-ին հայտնեցին, որ համագործակցությունը Հայաստանի տարբեր հաստատությունների միջև, որոնք զբաղվում են քաղաքացիների գրանցման հարցերով,

[8] Հայաստանում գոյություն ունեն 990-ից ավել համայնքներ, որոնց չափերը տարբերվում են` փոքր գյուղերից մինչև քաղաքների հասնելով և Երևանի թաղամասեր` տասնյակ հազարավոր բնակչությամբ:
[9] Ոստիկանության Ծառայությունը փոխարինել է Ներքին Գործերի Նախարարությանը (լուծարված 2002թ.) այդ դերում:

լիարժեք չէ և հաճախ չի հաջողվում մահացած մարդկանց անունները գրանցումից հանել:

Վերջերս, մի քանի համայնքներում նշանակալից բարելավումներ կատարվեցին ընտրացուցակների որակի առումով, երբ համայնքների ղեկավարները, միջազգային համայնքի աջակցությամբ, համագործեցին քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ:

Ընտրատեղամասերից շատերում ընտրացուցակներն ի ցույց դրվեցին ընտրություններից 40 օր առաջ, հնարավորություն ընձեռնելով ընտրողներին ստուգել և փոփոխել տվյալները:[10] Վերջնական ընտրացուցակները փակցվեցին ընտրատեղամասերում՝ ընտրությունից 2 օր առաջ: Ընտրելու իրավունք ունեցող ընտրողները, որոնց անունները բաց էր թողնվել ընտրացուցակներից, կարող էին դիմել առաջին ատյանի դատարան, ներառյալ ընտրության օրը՝ տեղեկանք ստանալու համար, ինչը նրանց քվեարկելու իրավունք էր տալիս:[11]

Արտերկրներում գտնվող Հայաստանի քաղաքացիները իրավունք ունեն քվեարկելու խորհրդարանական ընտրությունների համար և պետք է ընդգրկվեն հյուպատոսական առաքելության ընտրացուցակներում՝ իրենց ներկայիս բնակության վայրին հարակից, կամ՝ իրենց մշտական գրանցման հետ կապված ընտրատեղամասում: Չնայած այն բանի, որ ճշգրիտ գրանցումներ չկան, բոլորին հայտնի է, որ Հայաստանի քաղաքացիներից շատերը բնակվում են արտերկրում:[12] Կրկին, այս հանգամանքների պատճառով ամենուր չարաշահումներ եղան: Արտերկրում գրանցված ընտրողները, ինչպես և զինվորականները և բանտարկյալները, ընտրության իրավունք ունեն միայն համամասնական ընտրակարգով, և ոչ՝ մեծամասնական:

Մայիսի 22-ին ԿԸՀ-ը հայտարարեց, որ համամասնական ընտրակարգով ընտրության իրավունք ունեցող ընտրողների ընդհանուր թիվը գրանցվել է 2.317.945, իսկ մեծամասնականով՝ 2.280.557: Համաձայն ԿԸՀ-ի տրամադրած տեղեկատվության՝ մոտ 4.050 ընտրողներ, որոնք չէին ընդգրկվել ընտրացուցակներում, դատարանից տեղեկանք էին ստացել, ինչը թույլ էր տվել նրանց քվեարկել: Սակայն, իր վերջնական արդյունքների արձանագրության մեջ՝ ընծայված մայիսի 31-ին, ԿԸՀ-ը արձանագրեց, որ գրանցված ընտրողների ողջ թիվը կազմել է 2.340.744: Այս անճշտությունը այդպես էլ չբացատրվեց:

---

[10] Յուրաքանչյուր ընտրատեղամասում գրանցված ընտրողների առավելագույն թիվը կազմում է 2000 (Ընտրական Օրենսգիրք, հոդված 15(6)):

[11] Նման դիմում կատարելու ընտրողի իրավունքը հիմնված է Սահմանադրական Դատարանի 2002թ. հոկտեմբերին ընդունված որոշման վրա, որը չեղյալ համարեց Ընտրական Օրենսգրքի հոդված 14(3):

[12] Համաձայն Արտաքին Գործերի Նախարարության տվյալների, 16,000 ընտրողներ քվեարկել են հյուպատոսարաններում տեղակայված ընտրատեղամասերում: Այս թիվը, ըստ շատերի, համարվում է արտերկրում բնակվող Հայաստանի քաղաքցիների փոքր համամասնությունը:

# VI. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

## Ա. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Որպեսզի կուսակցությունները և դաշինքները[13] թեկնածուների ցուցակ առաջադրեն համամասնական ընտրակարգով ընտրությունների համար, նրանց ցուցակները պետք է պաշտպանվեն 30.000[14] գրանցված ընտրողների ստորագրություններով և նվազագույն աշխատավարձի 2.500-ապատիկի ներդրված գումարով: Յուրաքանչյուր ցուցակում ընդգրկված թեկնածու պետք է ԿԸՀ-ին ներկայացնի տեղեկանք վերջին հինգ տարում Հայաստանի քաղաքացի հանդիսանալու և մշտապես բնակվելու մասին, հայտարարագիր՝ իր սեփականության/ունեցվածքի և ընտանիքի եկամուտների մասին: Համամասնական ընտրակարգով ներկայացված ընտրացուցակներում թեկնածուների հինգ տոկոսը պետք է լինեն կանայք, չնայած ցուցակներում նրանց տեղավորելու մասին ոչ մի կանոն չկա: Ցուցակով առաջադրած թեկնածուները կարող են այդ կուսակցության անդամը չլինել: Օրինակ, «Հանրապետական Կուսակցության» թեկնածուների ցուցակում երկրորդ տեղն էր զբաղեցնում Պաշտպանության Նախարար Սերժ Սարգսյանը՝ որն այդ կուսակցությանը չի անդամակցում:

Ընտրական Օրենսգիրքը թույլ չի տալիս դաշինքներին թեկնածուներ առաջադրել մեծամասնական ընտրակարգով ընտրությունների համար: Մի սահմանափակում, որը ռացիոնալ չէ: Բացի այն թեկնածուներից, որոնք առաջադրվում են կուսակցությունների կողմից, անկուսակցական մեծամասնական թեկնածուները կարող են առաջադրվել «քաղաքացիների նախաձեռնությամբ»՝ ամենաքիչը 50 ընտրողների կողմից: ԸԸՀ-ի կողմից գրանցվելու համար, առաջադրումները պետք է պաշտպանվեն ամենաքիչը 500 ընտրողի ստորագրություններով՝ այդ ԸԸՀ-ի շրջանակներում, և պետք է նվազագույն աշխատավարձի 100-ապատիկ չափով գումար մուծվի: Նշենք ևս մեկ անգամ, որ թեկնածուն պետք է ապացույց ներկայացնի, որ հինգ տարի Հայաստանի քաղաքացի է հանդիսանում և հինգ տարի մշտապես բնակվում է Հայաստանում, ինչպես նաև տեղեկատվություն իր սեփականության/ունեցվածքի և ընտանիքի եկամուտների մասին:

Ընտրական Օրենսգիրքը ստորագրությունների իսկությունը ստուգելու բանաձև է տալիս, ստուգելով ընդամենը 2 տոկոսը: Եթե հայտնաբերվում են մի քանի անվավեր ստորագրություններ, այդ թիվը բազմապատկվում է 50-ով, որպեսզի համամասնորեն գնահատվի, թե քանի քանի անվավեր ստորագրություն է առկա ընդհանուր ստորագրությունների ներկայացված ցուցակում: Սա ստորագրությունները ճշտելու համար ադեկվատ բանաձև չէ և կարող է չարաշահումների առիթ հանդիսանալ, հատկապես՝ համեմատաբար փոքրաթիվ ստորագրությունների դեպքում, ինչը պահանջվում է մեծամասնական ընտրակարգով առաջադրվող թեկնածուների համար: Թեկնածուներից պահանջվող հինգ տարվա «մշտական բնակվելու» փաստաթուղթը չի համապատասխանում օրենքով սահմանված բնակությանը վերաբերող կետերին՝

---

[13] Քաղաքական կուսակցությունները ղեկավարվում են Քաղաքական Կուսակցությունների մասին Օրենքով և պետք է գրանցվեն Արդարադատության Նախարարությունում: Դաշինքները (գրանցված քաղաքական կուսակցությունների պաշտոնական դաշինքները) պետք է պաշտոնապես գրանցվեն ԿԸՀ-ում:

[14] Համաձայն Եվրախորհրդի Վենետիկի Հանձնաժողովի Ընտրական Հարցերում Բարեխիղճ Պրակտիկայի Կանոնակարգի՝ հրապարակված 2000թ.-ին, պահանջվող ստորագրությունների թիվը չպետք է գերազանցի ընտրատարածքում գրանցված ընտրողների 1%-ը:

շարադրված Հայաստանի Քաղաքացիական Օրենսգրքում, որտեղ նման հասկացություն չկա:[15]

Ընտրական Օրենսգրքի Հոդված 97 (2)-ը զգուշացնում է, որ հասարակական գրասենյակներում ներգրավված անձինք չեն կարող գրանցվել որպես մեծամասնական ընտրակարգով թեկնածուներ, եթե նրանք նախքան գրանցումը վայր չդնեն իրենց լիազորությունները: Նման սահմանափակում չի կիրառվում համամասնական ընտրակարգով գրանցվելու դեպքում: Այսպիսով, երկու առաջադրված թեկնածուների գրանցումը մեծամասնական ընտրակարգի համար մերժվեց (ԸԸՀ-ր 30 և 51), որովհետև նրանք համայնքի ղեկավարներ էին, մինչդեռ Երևանի քաղաքապետը և Պաշտպանության Նախարարը գրնացվեցին համամասնական ընտրակարգի ցուցակում, շարունակելով զբաղեցնել իրենց պաշտոնները ողջ ընտրապայքարի ընթացքում: Այս սահմանափակումը անհետևողական է, և հարկ է այլընտրանքային պաշտպանության ձևերը հստակեցնել, որպեսզի հասարակական գրասենյակների առումով չարաշահումներ չլինեն:

## Բ. ԳՐԱՆՑՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴԱՇԻՆՔՆԵՐԸ ԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

Տասնյոթ քաղաքական կուսակցություն և չորս ընտրական դաշինք, ներառյալ 1.000 թեկնածուներ, գրանցվեցին ԿԸՀ-ի կողմից՝ համամասնական ընտրակարգով ընտրությունների համար, ընտրողներին առաջարկելով բազմազան ընտրություն: Կառավարությունում տեղ զբաղեցնող երկու կուսակցություններից՝ «Հանրապետական Կուսակցությունից» ներգրավվեցին 120 թեկնածուներ, իսկ ՀՅԴ-ից՝ 101 թեկնածուներ: «Արդարություն» դաշինքը ներկայացրեց ամենաերկար ցուցակը՝ 136 թեկնածու:[16] Որոշ փոքր կուսակցությունների անդամներ ընդգրկվեցին ավելի մեծ կուսակցությունների կողմից ներկայացված ցուցակներում, որոնց հետ նրանք համագործակցում էին, բայց դաշինք չէին կազմել:

Թեկնածուների գրանցումն ավարտելուց հետո, ապրիլի 10-ին, ԸԸՀ-րում գրանցվել էին 380 թեկնածուներ 56 մեծամասնական տեղերի համար: Հետագա հրաժարականների և բողոքարկումների արդյունքում մեծամասնական ընտրակարգով թեկնածուների ընդհանուր թիվը ընտրության օրը կազմում էր 272: Ընտրապայքարից հեռացածների զգալի թիվը, համարյա մեկ երրորդը, ծագում էր քաղաքական սպեկտրից: Հրաժարական ներկայացնողներից շատերն ընդհանուր պատճառաբանություններ էին բերում, սակայն նրանցից ոմանք հաստատեցին քաղաքական հարաբերությունները կուսակցությունների և թեկնածուների միջև: Անհիմն պնդումները կաշառքի կամ միջամտության մասին չհաստատվեցին:

Ոչ մի ընտրատարածքային մրցակցություն չարտահայտեց համամասնական ընտրացուցակով ընթացող ընտրապայքարը որպես քաղաքական շահերի մրցություն. համամասնական ընտրատարածքներում թեկնածուների ամենաբարձր թիվը 11 էր: Ինը ընտրատարածք ունեին սահմանափակ մրցակցություն երկու թեկնածուների միջև, մինչ

[15] Քաղաքացիական Օրենսգիրքը պահանջում է, որպեսզի քաղաքացիները «բնակության վայր» ունենան, որը սահմանվում է որպես «վայր, որտեղ [քաղաքացին] մշտապես կամ առավելապես բնակվում է»:
[16] Այն ցուցակները, որոնք ընդգրկում են առկա տեղերից (75) ավելի թեկնածու, թույլ են տալիս փոխարինել թեկնածուներին, երբ համամասնական թեկնածուն մերժվում է գրանցման մեջ, ինքնաբացարկ է հայտարարում ընտրությունից առաջ, հաղթում է մեծամասնական ընտրակարգով, կամ հրաժարվում է մանդատ ստանալուց:

չորս ընտրատարածքներում միայն մեկ թեկնածու կար: Բազմաթիվ թեկնածուներ տեղական համբավավոր դեմքերն էին, հաճախ գործնական համայնքից, և որոշ տեղեր ընտրապայքարն արտացոլում էր տեղական մրցակցությունը:

Մեծամասնական թեկնածուներից կեսից ավելին անկուսակցական էին, չնայած պարզ էր, որ շատերը կապեր ունեն կառավարության կամ քաղաքական կուսակցությունների հետ: Ոչ մի քաղաքական կուսակցություն չփորձեց ծածկել 56-ընտրատարածքների մեկ երրորդից ավելին: Համամասնական ցուցակով մրցակցող17 կուսակցություններից 13 զբաղված էին նաև մեծամասնական թեկնածուներով, ինչպես արեցին երկու կուսակցություններ. համամասնական ընտրությունների համար ընդգրկեցին թեկնածուներ այլ կուսակցության ցուցակից: Բազմաթիվ անդամ-կուսակցություններ չորս դաշինքից, որոնք մրցակցում էին համամասնական ընտրակարգով, թեկնածուներ ներկայացրերցին իրենց սեփական իրավունքով: Երևանի երկու ընտրատարածքներում «Արդարություն» դաշինքի կուսակցությունները ընտրապայքարում իրար ընդդեմ դուրս եկան: Երկու փոքր կուսակցություններ, որոնք ընդգրկված չէին համամասնական ընտրություններում, յուրաքանչյուրն իր հերթին, եզակի թեկնածու ներկայացրեց մեծամասնական ընտրատարածքում:

Ընդհանուր թվով 37 քաղաքական կուսակցություններ ընտրություններում մրցեցին այս կամ այն ձևով: Մի քանի թեկնածուներ երկու ընտրակարգով էլ առաջադրվել էին ՝ և համամասնական, և մեծամասնական:

## Գ. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄԸ

Ելնելով առաջին ատյանի դատարաններում քննության առնված բողոքներից, ԸԴԱ-ը իմացավ, որ 22 դեպքերում, լինելով հավանական մեծամասնական թեկնածուներ, նրանց գրանցումը մերժվել է ԸԸՀ-րի կողմից, կամ հետագայում դուրս են հանվել գրանցումից՝ կոնկրետ իրավական պահանջները չբավարարելու պատճառով:

Ամենաքիչը վեց դեպքում թեկնածուների գրանցումը մերժվել էր նրանց անձնական ունեցվածքը լիովին չհայտարարագրելու հիման վրա: Այս դեպքերում ԸԸՀ-րի «անձնական սեփականություն» սահմանումը հաճախ շինծու էր, քանի որ ընդգրկված էին դեպքեր, երբ թեկնածուներին ենթադրում էին ընտանիքի անդամներին պատկանող ունեցվածքի փայատեր: Ոչ ԿԸՀ-ը, ոչ էլ ԸԸՀ-րը թեկնածուներին ուղղություններ չէին տվել, թե ինչ սեփականություն պետք է հայտարարագրվի, ինչը բերել էր չափանիշի անհամապատասխան կիրառմանը: ԸԴԱ-ն դիտորդները նույնպես հաստատեցին, որ սեփականության այդ ստուգումները կատարվել էին ընտրողական ձևով՝ կոնկրետ թեկնածուների նկատմամբ, մեծամասամբ նրանց, ովքեր կապված էին ընդդիմադիր քաղաքական ուժերի հետ: Ամենաքիչը յոթ առաջադրում մերվել էր անվավեր կամ կեղծ ստորագրության հիման վրա՝ առանց պոտենցիալ թեկնածուներին պակասը լրացնելու հնարավորություն տալու: Մեկ դեպքում, երբ ԸԸՀ 13-ի վարչական իրավունքի տակ գտնվող տարածքի սահմանները դեռ նոր էին փոփոխվել, առաջադրվող թեկնածուին մերժել էին ստորագրություններ հավաքել ընտրողներից: Մինչ այդ նա համարվում էր այդ ընտրատարածքի բնակիչ, սակայն հիմա՝ ոչ:

22-ից յոթ դեպքում ԸԸՀ-ի որոշումը առաջին ատյանի դատարանի կողմից փոխվել է, ի հայտ բերելով դատավորների ողջունելի անկախությունը և թեկնածուների գրանցվելու հնարավորությունը կամ իրավունքների վերականգնումը: Երկու դեպքում, այդ թվում

ԸԸՀ 30-ի, Դատարանը որոշեց, որ վավեր ստորագրությունները սխալ ձևով հայտարարվել էին կեղծ:

ԿԸՀ-ը որոշեց գրանցումից հանել մեկ թեկնածուի «Ազգային Միաբանություն Կուսակցության» ցուցակից, հիմք ընդունելով, որ ոչ ամբողջ սեփականությունն է հայտարարագրվել: Այդ որոշումը բողոքարկվեց, և դատարանը կայացրեց հակադարձ որոշում, վերականգնելով թեկնածուի իրավունքը: Այս դեպքը արտացոլեց անհետևողականության թերությունը գրանցման գործընթացում, քանի որ նույն անձը մերժվել էր որպես մեծամասնական թեկնածու նույն պատճառաբանությամբ ԸԸՀ 8-ի կողմից՝ մեկ այլ դատարանի որոշման համաձայն:

Արամ Կարապետյանը՝ «Արդարություն» դաշինքի առաջնորդներից մեկը, դուրս էր հանվել գրանցված թեկնածուների ցուցակից՝ համաձայն ԸԸՀ 17-ի և ԿԸՀ-ի որոշումների՝ հինգ տարվա մշտապես բնակվելու պահանջը չբավարարված լինելու պատճառով: Այդ որոշումները կայացվել էին այն բանից հետո, երբ Հայաստանի Ոստիկանության կողմից տեղեկատվություն էր տրամադրվել ԸԸՀ 17-ին՝ ակնհայտորեն «լրատվամիջոցների չարաշահումների» հողի վրա: Համաձայն Ոստիկանության, պրն. Ա. Կարապետյանը վերջին հինգ տարիների ընթացքում որպես մշտական բնակիչ գրանցված է եղել Ռուսաստանի Դաշնությունում: Պրն. Ա. Կարապետյանը պնդեց, որ նա շարունակել է մնալ Հայաստանում գրանցված որպես մշտական բնակիչ այդ ողջ ժամանակաշրջանի ընթացքում, քանի որ դա իր օրինական իրավունքն էր: Անհեթեթորեն, պրն. Ա. Կարապետյանը 2003 թ.-ի հունվարին գրանցվել էր որպես նախագահի թեկնածու, ինչի համար պետք էր կատարել տաս տարվա մշտական բնակության պահանջը: Քանի որ մանրամասները մնացին չպարզված, ԸԴԱ-ը մտահոգված է, որ այդ որոշումները թափանցիկ չէին և կայացվել էին անկախ չպարզված մշտական բնակության օրինական սահմանումներից:

## VII. ԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

Ընտրական քարոզարշավը հիմնականում տեղի ունեցավ հանգիստ մթնոլորտում: Որպես դրական առաջընթաց նախագահական ընտրությունից հետո, հայտարարություններ չեղան քարոզարշավի զգալիորեն անհավասար հնարավորությունների վերաբերյալ՝ մասնավորապես, համամասնական մրցակցության ընթացքում: Ակտիվ քարոզարշավ տեղի ունեցավ ողջ երկրի տարածքում, երևան բերելով պաստառներ և հանրահավաքներ: Ընտրության նկատմամբ հետաքրքրությունը համեմատաբար ցածր էր՝ վերջերս տեղի ունեցած նախագահական ընտրության ընթացքում ապրած հիասթափությունների պատճառով: Նկատվում էր նախագահ Քոչարյանին սատարող կուսակցությունների, մասնավորապես կառավարությունում տեղ գտած երկու կուսակցությունների, բացահայտ ընտրապայքարն իրար դեմ:

Ընտրապայքարը հիմնականում ավելի ակտիվ էր ընթանում մեծամասնական մրցակցության համար: Նախընտրական լարվածությունները նկատելիորեն բարձր էին որոշ ընտրատարածքներում, որոնք արտացոլեցին տեղական մրցակցությունները: Սահմանափակ մրցակցությունը ընտրատարածքներում, որտեղ մեկ կամ երկու թեկնածուներ էին, դուրս եկավ համայնքի ազդեցություն ունեցող դեմքերի շահերի մրցակցություն, հատկապես տնտեսապես զորեղ մարդկանց: ԸԴԱ-ը դիտորդները շարունակաբար հայտարարություններ ստացան Լոռու մարզի Ալավերդի քաղաքում և

Սյունիքում ընտրողներին առանձին թեկնածուներին սատարելու հարկադրումների վերաբերյալ, սակայն ոչ մի պաշտոնական բողոք չի արձանագրվել: Բռնության մի քանի հայտարարություններ արվեցին: Երեք ընտրատարածքներում՝ Արարատում, Աբովյանում և Սևանում հարձակումներ են տեղի ունեցան թեկնածուների շտաբերի վրա: Սևանում երկու մրցակից թեկնածուների շտաբեր տարբեր ժամանակ հարձակումների էին ենթարկվել: Սյունիքի մարզում ԸԸՀ-ի անդամի վրա նույնպես ֆիզիկական հարձակում է եղել: ԿԸՀ-ը հայտարարություն հրապարակեց՝ խստորեն դատապարտելով ընտրությունների հետ առնչվող բոլոր բռնությունները և կոչ արեց ընտրությունների մասնակիցներին հանդուրժողականություն ցուցաբերել:

Որոշ կուսակցություններ խախտեցին Ընտրական Օրենսգրքի դրույթները, որոնք արգելում են քաղաքացիներին անվճար ապրանք կամ ծառայություն մատուցել, կամ խոստանալ նախընտրական շրջանում: ԸԴԱ-ի կողմից ստացված բողոքներում զետեղված էին «նվերների» բաշխում՝ վառելիքի, սննդամթերքի և համակարգիչների տեսքով, ճանապարհների ասֆալտապատում և բնակելի շենքերի վերանորոգում: Չնայած նման բողոքներից մի քանիսը պաշտոնապես ներկայացվել էին ընտրությունների հետ կապված լիազորություններ ունեցող անձանց, ԿԸՀ-ին և ԸԸՀ-րին հիմնականում չհաջողվեց քայլեր ձեռնարկել, որպեսզի այդ գործողությունների համապատասխանությունը օրենքին հետաքննության առնվեր: Հայտարարություններ եղան ձայների համատարած գնման մասին, սակայն դրանք հիմնավորված չէին:

Կային առանձին դեպքեր, երբ հասարակական միջոցները և հասարակական աշխատակիցները, հատկապես ուսուցիչները, անպատշաճ կերպով իրենք իրենց ներգրավեցին քարոզարշավի մեջ՝ ի նպաստ կոնկրետ կուսակցության կամ թեկնածուի: Չնայած Ընտրական Օրենսգիրքն արգելում է բարեգործների ներգրավումը ընտրական քարոզարշավում, Հրազդանում տեղական բարեգործական կազմակերպության գործունեության և մեկ թեկնածուի քարոզարշավի համընկում տեղի ունեցավ:

Ընտրապայքարի համար թեկնածուների և կուսակցությունների/դաշինքների կողմից կատարվող ծախսերի վերահսկողությանը վերաբերող Ընտրական Օրենսգրքի դրույթները[17] անարդյունավետ են, քանի որ թույլատրելի սահմանները անիրատեսորեն ցածր են: Բացի գրանցումը անվավեր ճանաչելուց, դրույթները նաև չեն պարունակում այլ կարգավորող սանկցիա այդ սահմաններն անցնելու դեպքում: Ընտրություններից առաջ, թեկնածուները և կուսակցությունները/դաշինքները պետք է բացեն բանկային հաշիվ, որի միջոցով պետք է անցնեն նախընտրական քարոզչության գործողությունների համար կատարվող բոլոր մուտքերը և ծախսերը: Բանկային քաղվածքները պետք է ներկայացվեն ԿԸՀ-ին կամ ՏԸՀ-րին յուրաքանչյուր երեք օրը մեկ: Վերջնական հայտարարագրերը պետք է ներկայացվեն ԿԸՀ-ին ընտրությունների օրվանից հետո 15 օրվա ընթացքում: ԸԴԱ-ի կողմից կատարված նախընտրական հիմնադրամների սահմանափակ հետազոտությունը բացահայտեց, որ դեպքերի մեծ մասում հաշիվները հանդիսանում էին միայն «կեղև», որը չէր արտահայտում իրական մուտքերը/ծախսումները, իսկ մի շարք դեպքերում թեկնածուների կողմից նույնիսկ չէին բացվել:

17 Հոդվածներ 25 և 26.

# VIII. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ

## Ա. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ

Հայաստանում հեռուստատեսությունը քաղաքականությանը վերաբերող տեղեկատվության ամենազերակայող աղբյուրն է: Հանրային հեռուստատեսությունը, *Հ1*-ը, դասվում է հեռարձակողների այն սակավ թվին, որոնք հեռարձակում են ամբողջ հանրապետությունով մեկ, և հանդիսանում է ամենամեծ ազդեցությունն ունեցող զանգվածային լրատվության աղբյուր: Բացի հանրային հեռուստատեսությունից, երկրում գործում են մոտ 45 հեռուստակայաններ, որոնցից ավելի քան 20-ը գտնվում են Երևանում: Երկու կայացած անկախ հեռարձակողների՝ *Ա1+*-ի և *Նոյան Տապանի* լիցենզիաների վերականգնման գործում թերանալը մնում է վիճաբանական հարց: Երկու պետականորեն հիմնադրված մարմիններ վերահսկում և կարգավորում են էլեկտրոնային լրատվամիջոցները՝ Հեռուստատեսության և Ռադիոյի Ազգային Խորհուրդը (ՀՌԱԽ) լիցենզավորում և վերահսկում է մասնավոր հեռարձակողների աշխատանքը, իսկ Հանրային Հեռուստատեսության և Ռադիոյի Խորհուրդը կառավարում է պետականորեն ֆինանսավորվող լրատվամիջոցները:

Երկու պետականորեն ֆինանսավորվող և մի քանի մասնավոր թերթեր մատուցում են տարբեր, բայց բևեռային տարբերության կարծիքներ: Սակայն, ցածր տպաքանակի և հիմնականում վատ տնտեսական պայմանների պատճառով, թերթերի մեծ մասը ֆինանսապես կախյալ է հովանավորներից և ունի սահմանափակ թվով ընթերցողներ:

Չնայած որ Հայաստանում լրատվամիջոցների ազատություն ընդհանուր առմամբ գոյություն ունի, մատուցված տեղեկատվությունը չունի բավարար բազմատեսակություն, որակ և անկախություն, որպեսզի թույլ տա ընտրողներին կատարել իրազեկ ընտրություն: Խորհրդարանական ընտրությունների ընթացքում լրագրողների դեմ ուղղված սպառնալիքներ կամ բռնություններ չեն արձանագրվել, սակայն նախկինում տեղ գտած բռնությունների դեպքերը որոշ լրագրողների կողմից համարվում էին իրենց աշխատանքի վրա շարունակվող բացասական ազդեցության աղբյուր, որը բերում է ինքնագրաքննության:

## Բ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Ընտրությունների ընթացքում լրատվամիջոցների աշխատանքը կարգավորող օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է միջազգային չափանիշներին: Սահմանադրությունը երաշխավորում է խոսքի ազատությունը և ցանկացած տեղեկատվական միջոցների օգնությամբ տեղեկատվություն և գաղափարներ ստանալու և տարածելու իրավունքը: «Հեռուստատեսության և Ռադիոյի մասին» օրենքը արգելում է պետության կողմից գրաքննության կիրառումը և պետականորեն ֆինանսավորվող հեռուստատեսությանն ու ռադիոյին պարտավորեցնում է տրամադրել օբյեկտիվ և անկողմնակալ տեղեկատվություն: Սակայն, օրենքը չի պարունակում նման դրույթներ մասնավոր էլեկտրոնային լրատվամիջոցների վերաբերյալ: «Զանգվածային լրատվական միջոցների մասին» օրենքը պահանջում է, որ տպագիր լրատվամիջոցները ղեկավարվեն հավասարության և կարծիքների բազմազանության հիմունքներով:

Ընտրական Օրենսգիրքը նշում է, որ պետականորեն ֆինանսավորվող լրատվամիջոցները պետք է տրամադրեն հավասար պայմաններ համամասնական ընտրություններում մասնակցող կուսակցություններին և դաշինքներին, ինչը ներառում է անվճար և վճարովի եթերաժամանակի և տպագիր տեղի մատչելիությունը: Մարտի 28-ին ԿԸՀ-ը ընդունեց որոշում, որում նշվում էին հավասար եթերաժամանակ և տպագիր տեղ տրամադրելու ընթացակարգերի կոնկրետ մանրամասերը: Որոշումը նույնպես պարտավորեցրեց մասնավոր հեռարձակողներին համամասնական և մեծամասնական ընտրակարգերով ընտրություններին մասնակցող թեկնածուներին և կուսակցություններին/դաշինքներին եթերաժամանակ տրամադրել հավասար հիմունքներով:

Նախագահի կողմից ապրիլի 29-ին ստորագրված Քրեական Օրենսգրքի փոփոխությունները, որոնք պաշտպանում են պետական պաշտոնյաներին լրատվամիջոցների միջոցով զրպարտությունից, կարող է հանգեցնել լրագրողների ազատության հետ կոմպրոմիսի, նրանց կողմից հետագա ընտրությունների լուսաբանման ժամանակ:

## Գ. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ

Ապրիլի 25-ից մինչև մայիսի 23 ընկած ժամանակահատվածում ԸԴԱ-ը անցկացրեց ընտրված լրատվության աղբյուրների կողմից քարոզարշավի լուսաբանման քանակական և որակական վերլուծություն: Մոնիտորինգը ներառեց հինգ հեռուստաալիք (*Հ1, Պրոմեթևս, ԱԼՄ, Շանթ և Արմենիա հեռուստատեսություններ*) և վեց թերթ (*Հայաստանի Հանրապետություն, ԱԶԳ, Առավոտ, Գոլոս Արմենիի, Հայոց Աշխարհ* և *Օրրան*):

Որպես կարևոր և դրական զարգացում՝ ի համեմատ նախագահական ընտրությունների, պետք է նշել, որ *Հ1*-ը կատարեց իր օրենքով նախատեսված պարտավորությունը, կուսակցություններին և դաշինքներին տրամադրելով անվճար եթերաժամանակ հավասար պայմաններով՝ համաձայն ԿԸՀ-ի մարտի 28-ի որոշմամբ հաստատված ժամանակացույցի: Ավելին, այն հիմնականում մատուցեց քարոզարշավի անկողմնակալ լուսաբանում իր պրայմթայմ լրատվական և վերլուծական ծրագրերում՝ թե քանակական և թե որակական առումներով: Ընդհանուր առմամբ, *Հ1*-ը իր լուսաբանման համեմատական մասը նվիրեց թե իշխանական կուսակցություններին՝ «Հանրապետական Կուսակցություն» (9.6%) և «ՀՅԴ» (9.5%), և թե կառավարությունում չընդգրկված հիմնական կուսակցություններին և դաշինքներին՝ «Ազգային Միաբանություն Կուսակցություն» (11.4%), «Արդարություն» դաշինք (11.1%) և «Օրինաց Երկիր» (10.4%): «Արդարություն» դաշինքը մեծամասամբ ամբողջ քարոզարշավի ընթացքում պատկերվում էր չեզոք կերպով, իսկ իշխանությանը մոտ գտնվող «Հանրապետական Կուսակցության» լուսաբանումը ընտրության օրը մոտենալիս ավելի դրական դարձավ:

Ի հակառակ դրան, ԸԴԱ-ն կողմից մոնիտորինգի ենթարկված մասնավոր հեռարձակողները ցուցաբերեցին կողմնակալություն: *Պրոմեթևս* և *Արմենիա* հեռուստաընկերությունները՝ միակ երկու ամբողջ հանրապետությունով հեռարձակվող մասնավոր ալիքները, տրամադրեցին իրենց պրայմթայմ լրատվության մինչև 60% իշխանամետ կուսակցություններին: Լուսաբանումը զգալիորեն դրական էր:

Հակառակը՝ «Արդարություն» դաշինքը և «Ազգային Միաբանություն Կուսակցությունը» հիմնականում մատնվեցին անտեսության, զբաղեցնելով լուրերի լուսաբանման 1%-ից պակաս ժամանակը: *ԱԼՄ* հեռուստաընկերությունը հատկապես բացահայտ կերպով կողմնակալ մոտեցում ցուցաբերեց, թե քանակական (33%), և թե որակական առումով, ի օգուտ «Ժողովրդական Կուսակցությանը»՝ փոքր կուսակցություն, որը մասնակցում էր համամասնական ընտրություններում և առաջնորդվում էր այդ հեռուստաալիքի սեփականատիրոջ կողմից: Մինչդեռ *Շանթ* հեռուստատեսությունը ավելի հավասարակշռված էր, նրա կողմից կատարվող «Հանրապետական Կուսակցության» լուսաբանումը նկատելիորեն դրական էր (20.4%): ԸԴԱ-ը նույնպես նկատեց մի քանի դեպք, երբ վճարովի քաղաքական ծրագրերը *ԱԼՄ* հեռուստաալիքով չէին կոչվել այդպիսին, ինչը հակասում է 2003թ.-ի մարտին ԿԸՀ-ի կողմից ընդունված որոշմանը: ՀՌԱԽ-ը արձանագրեց, որ չի ստացել մասնավոր ընկերությունների կողմից քարոզարշավի լուսաբանմանը վերաբերող որևէ բողոք:

Նախագահական ընտրությունների ժամանակ երկու հիմնական մասնակիցների միջև ավելի վաղ այս տարի տեղի ունեցած առաջին հեռուստաբանավեճից հետո, հանրային հեռուստատեսությունը և մի շարք տեղական մասնավոր հեռուստաընկերություններ կազմակերպեցին մեծ թվով բանավեճեր թեկնածուների միջև և մատուցեցին տարբեր ֆորմատներով անցկացված քննարկումներ և վերլուծական ծրագրեր ընտրական հարցերի շուրջ: Միջազգային հանրայնքն աջակցեց ընտրողների կրթությանը վերաբերող տեղեկություններ տրամադրող հեռուստահոլովակների ցուցադրմանը:

Տպագիր մամուլը ևս մեկ անգամ տրամադրեց տեսակետերի տարակարծություն, սակայն թերթերը ցուցաբերեցին կողմնակալություն: Ավելի դրական առումով, տպագիր մամուլը ավելի մեծ ուշադրություն դարձրեց այնպիսի կարևոր հարցերին, որոնք չլուսաբանվեցին հեռուստատեսության կողմից, ինչպիսիք են, օրինակ՝ ավելի փոքր և ոչ կուսակցական մեծամասնական թեկնածուների պլատֆորմները:

Հիմնական պետականորեն ֆինանսավորվող *Հայաստանի Հանրապետություն* թերթը ցուցաբերեց բացահայտ աջակցություն իշխանամետ կուսակցությունների օգտին, տրամադրելով տպագիր տեղի 20.5% «Հանրապետական Կուսակցությանը»՝ այդ լուսաբանումը ներկայացված էր բավականին դրական շնչով: Հակառակը դրան, թերթը «Արդարություն Դաշինքին» տրամադրեց իր տպագիր տեղի միայն 5.6%-ը, և այդ լուսաբանումն ուներ կամ չեզոք կամ բացասական բնույթ, և 1.8%-ը՝ «Ազգային Միաբանություն Կուսակցությանը»: Այդպիսով, թերթը խախտեց իր նկատմամբ գոյություն ունեցող օրենսդրական պահանջը՝ կուսակցություններին տրամադրել հավասար պայմաններ:[18]

ԸԴԱ-ն կողմից մոնիտորինգի ենթարկված մասնավոր թերթերից *Օրրանը* ցուցաբերեց բացահայտ աջակցություն ի օգուտ «Արդարություն» դաշինքի՝ տրամադրելով վերջինիս տպագիր տեղի 23.6%-ը՝ դրական լուսաբանմամբ: Մինչ, *Առավոտը* քննադատող մոտեցում ցուցաբերեց իշխանամետ կուսակցությունների նկատմամբ, *Հայոց Աշխարհը* և *Գոլոս Արմենիի* թերթերը սատարեցին այդ կուսակցություններին: *ԱԶԳ*-ը տրամադրեց 62%-ը, մեծապես դրական լուսաբանմամբ, իր հիմնադիր «Ռամկավար Ազատական Կուսակցությանը»: 24-ժամյա առանց քարոզչության ժամանակահատվածը խախտվեց

---

18 Ընտրական Օրենսգրքի հոդված 20 (4) և ԿԸՀ-ի 2003 թ. մարտի 28-ի «Լրատվական միջոցներում նախընտրական քարոզչության կարգի մասին» որոշման հոդված 25:

*Հայոց Աշխարհի* կողմից, որն անցկացրեց հարցազրույցներ երկու ոչ-կուսակցական թեկնածուների հետ:

Ի հակառակ նախագահական ընտրությունների, լրատվական միջոցները ճիշտ լուսաբանեցին ԸՄԴԱ-ն «Նախնական Հայտնաբերությունների և Եզրակացությունների Հայտարարությունը» և դրան վերաբերող մայիսի 26-ի մամուլի ասուլիսը: *Հայաստանի Հանրապետություն*-ը ներառեց այդ Հայտարարությունը որպես վճարովի գովազդ, ինչը հրաժարվել էր անել նախագահական ընտրությունների ժամանակ:

## IX. ԲՈՂՈՔՆԵՐԻ և ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Ընտրական հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս ընտրական հանձնաժողովում կամ առաջին ատյանի դատարանում: Սակայն, իրականության մեջ ԸԸՀ-երի այն որոշումները, որոնք վերաբերում էին մեծամասնական ընտրակարգով ընտրություններին, չեն համարվել ԿԸՀ-ի կողմից որպես իր իրավասության տակ գտնվող հարցեր՝ իրեն վերապահելով միայն խորհրդատվական դերը: Ոչ մի բողոք չի ընդունվել առաջին ատյանի դատարանների կողմից:

Ինչպես և անցած ընտրություններում, բողոքների և բողոքարկման ընթացակարգերը ոչ ադեկվատ էին: Ընթացակարգային շրջանակը շփոթիչ էր և հանգեցրեց օրենսդրության ոչ հետևողական մեկնաբանմանը և կիրառմանը: Մինչ քաղաքական կուսակցություններն ու ավելի լայն հանրությունը շարունակում էին անվստահություն ցուցաբերել դատական իշխանությունների անկախության և ԿԸՀ-ի կվազի-դատական դերի նկատմամբ, նկատվեց ավելի մեծ ցանկություն տուժածների կողմից՝ ներկայացնել պաշտոնական բողոքներ և դատարանների ավելի մեծ ակտիվությունը՝ ընտրական հանձնաժողովների կողմից կատարված վարչական սխալները չեզոքացնելու գործում:

Բացի թեկնածուների գրանցման հետ կապված հարցերից, նախընտրական շրջանում ԿԸՀ-ին և ԸԸՀ-ներին ներկայացվել է քիչ թվով էական բողոք: Սակայն, ընտրությունների օրվանից և մինչև սահմանված 48-ժամյա ժամկետի ավարտը (28 մայիսի), ԿԸՀ-ը ստացել է 60 բողոք: Դրանց մեծ մասը վերաբերում էր ընտրական տեղամասերում տեղի ունեցած դեպքերին, որոնք ԿԸՀ-ը համարեց իր իրավասությունից դուրս և ուղարկեց ԸԸՀ-րին՝ պարզելու համար: Ինչպես արդեն նշված էր, ԿԸՀ-ի որոշումների մեծ մասը ընդունվել է փակ դռների ետևում, շատ հաճախ հանձնաժողովի առանձին անդամների կողմից: Առանձին ԸԸՀ-երի կողմից ստացված բողոքների թվի վերաբերյալ տեղեկություններ չկային:

Գլխավոր Դատախազությունը ստացել էր 17 բողոք Քրեական Օրենսգրքի խախտումների մասին, որոնք վերաբերում էին քարոզարշավին և ընտրության օրվան: Այդ դեպքերից մի քանիսը կապված էին բռնության և Քրեական Օրենսգրքի այլ խախտումների հետ: Ինչպես և նախագահական ընտրությունների ժամանակ, այս անգամ էլ Գլխավոր Դատախազությունը դժկամությամբ մոտեցավ լուրջ իր ուշադրությանը ներկայացված խախտումների մասին հայտարարությունների քննությանը, ներառյալ այն խախտումների, որոնք դիտարկվել էին ԸՄԴԱ-ն կողմից ընտրության օրը:

## X. ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ընտրությունների արդյունքում քիչ բարելավումներ տեղի ունեցան Ազգային ժողովում կանանց ներկայացուցչությունը բարձրացնելու ուղղությամբ: Միայն յոթ (5.3%) կին ընտրվեց, ինչը քիչ է ավել նախկին Խորհրդարանում ընդգրկված չորս կանանց թվից (3%):[19] Կանայք նույնպես վատ էին ներկայացված որպես թեկնածուներ՝ նրանք կազմում էին մեծամասնական թեկնածուների միայն 4% և համամասնական ցուցակների միայն 15%: Բոլոր քաղաքական կուսակցություններն ու դաշինքները կատարեցին իրենց պարտավորությունը, ընդգրկելով 5% կանանց իրենց թեկնածուների ցուցակներում, սակայն նրանցից շատերի անունները տեղադրված էին այն տողերում, որոնք իրականում ընտրվելու հնարավորություն չունեին: Միայն երեք քաղաքական կուսակցություն կամ դաշինք իրենց ցուցակների առաջին տաս անվան մեջ էին ընդգրկել կանանց և միայն մեկ ցուցակում էր, որ կանանց անունները հավասարաչափ էին տեղաբաշխված ողջ ցուցակում: Քաղաքական կուսակցությունների առաջնորդների մեծ մասը, հատկապես Երևանից դուրս, չցուցաբերեց հետաքրքրություն քաղաքական կյանքում կանանց ավելի բարձր մասնակցությունը քաջալերելու կամ կանանց հատուկ մտահոգության առիթ հանդիսացող հարցերին անդրադառնալու նկատմամբ:

Դեռ գոյություն ունի կանանց ներկայացուցչության լուրջ պակաս կառավարությունում, ընտրովի մարմիններում և քաղաքական կուսակցությունների ղեկավարների շարքերում:[20] Որոշ քաղաքական կուսակցություններ ունեն կանանց ճյուղեր և քարոզարշավի ժամանակ փորձեցին անդրադառնալ կանանց մտահոգող հարցերին, այդ թվում՝ կանանց ֆորումներ կազմակերպելու միջոցով: Սակայն, կանանցից շատերը մերժեցին նվազագույն սահմանների կամ քվոտաների գաղափարն, ընդունված կանանց մասնակցության համար՝ համարելով դա վերադարձ դեպի կոմունիստական շրջան, երբ կանայք ներկայացված էին օրենսդիր և գործադիր իշխանություններում ավելի լայն կերպով, սակայն ձևական բնույթ էին կրում:

## XI. ՏԵՂԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԸ

Ընտրությունները դիտարկելու նպատակով ԿԸՀ-ի կողմից հավատարմագրվել էին քանութ տեղական դիտորդական խմբեր: Ամենամեծ տեղական դիտարկումները կատարվեցին «Ընտրությունը քոնն է» կազմակերպության կողմից, որը դիտարկեց նախընտրական շրջանը և ընտրությունների օրը դիտորդներ ուղարկեց մոտ 700 ընտրական տեղամաս: Այլ խմբեր կենտրոնացան ընտրությունների կոնկրետ տարրերի վրա, ինչպիսիք են օրինակ՝ լրատվամիջոցների մոնիտորինգը կամ ընտրությունների մատչելիությունը հաշմանդամների համար: Տեղական դիտորդների կողմից հրապարակային հայտարարությունները հիմնականում լավ էին լուսաբանվում լրատվական միջոցների կողմից:

---

19 Այդ կանանցից մեկը ընտրություններից հետո ներգրավվել է կառավարությունում, որպես նախարար, այսպիսով նոր խորհրդարանում վեց կին կա: Նախկին կառավարությունում ոչ մի կին չէր զբաղեցնում նախարարի պաշտոն:

20 Դատական իշխանությունը, որտեղ կանայք կազմում են բոլոր դատավորների մոտ 30%-ը՝ միակ պետական ճյուղն է, որտեղ կանանց ներկայացուցչությունը մոտ է հավասարին:

# XII. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ և ՀԱՇՎՄԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ [21]

## Ա. Քվեարկությունը

Ընտրության օրը հիմնականում հանգիստ էր, սակայն մթագնվեց Շահումյանում (Արարատի մարզ) ընտրատեղամասերից մեկի առաջ տեղի ունեցած մահաբեր կրակոցների պատճառով, որոնց արդյունքում վիրավորվել են նաև այլ անձինք տեղամասի ներսում: ԸՄԴԱ-ն դիտորդները ներկա էին դեպքի ժամանակ, սակայն նրանց վնաս չի պատճառվել: Այն անձը, որն ըստ ոստիկանության պատասխանատու էր կրակոցների համար, հետագայում մահացավ ստացած վերքերից: Ոստիկանության զեկուցագրերին, որ հրաձգությունը կապ չի ունեցել ընտրությունների հետ, հակասող ապացույցներ չկան: Մի քանի այլ ընտրատեղամասերում նույնպես արձանագրվել են բռնության դեպքեր, ներառյալ 0272 ընտրատեղամասում տեղի ունեցած ծեծկռտուկը: Ազգային ժողովի Արտաքին Գործերի Հանձնաժողովի Նախագահը ընտրությունների օրը հանեց իր մեծամասնական ընտրակարգով թեկնածությունը 45 ընտրատարծքում պատճառաբանելով դա սպառնալիքներով: ԸՄԴԱ-ն դիտորդները արձանագրեցին սպառնալիքների այլ փաստեր այցելած ընտրատեղամասերի երեք տոկոսի դեպքում:

ԱՄԴԱ-ն կողմից այցելած ընտրատեղամասերի մոտ 90%-ում քվեարկության գործընթացը ստացել է կամ դրական գնահատական, կամ ունեցել է միայն չնչին խնդիրներ: Այնուամենայնիվ, պրոբլեմներ դիտարկվել են, այդ թվում՝ 1287 ընտրատեղամասում արձանագրված ձայների գնման մեկ դեպք; կարուսելային քվեարկություն՝ 0851 և 1447 ընտրատեղամասերում; չօգտագործված քվեաթերթիկների դուրս հանում 0376 ընտրատեղամասից, որից հետո դրանք բաժանվել են ընտրատեղամասից դուրս; մարդիկ, որոնց ձեռքում կար մեկից ավելի անձնագրեր՝ 0029, 0413 և 0622 ընտրատեղամասերում; և 0947 ընտրատեղամասում տեղի ունեցած դեպք, երբ երկու ընտրողների թույլ է տրվել քվեարկել երկու անգամ: Առնվազն 13 ընտրատեղամասերում քվեարկության խուցերում դիտարկվել են ավելի քան մեկ մարդ, այնպիսի պայմաններում, երբ երրորդ անձի օգնությամբ կատարվող քվեարկության կարիք չկար: Զինվորականների բաց քվեարկություն դիտարկվել է 0955 և 0256 ընտրատեղամասերում, որտեղ այն տեղի էր ունենում սիստեմատիկ ձևով՝ մեկ ժամից ավելի ընթացքում: Դիտորդները ընտրության օրը արձանագրեցին լայնատարած բողոքներ կրկնակի քվեարկության մասին, սակայն շատ քիչ դեպքեր հաստատվեցին:

Կողմնակի անձանց ներկայություն է դիտարկվել ընտրատեղամասերի 10%-ում, և առնվազն 11 դեպքերում այդ անձինք ղեկավարում էին ՏԸՀ-երի աշխատանքը: Զինված ոստիկանության աշխատակիցներ են դիտարկվել 20 ընտրատեղամասերում, և դրանցից կեսը չէին եղել պաշտոնապես հրավիրված ՏԸՀ-ի նախագահի կողմից: Հրազեն կրող մասնավոր անձինք դիտարկվել են 0013 և 0028 ընտրատեղամասերում:

Կային մի շարք ընտրատեղամասեր, որտեղ խախտվել էր ընտրական ապահովությունը: Օրինակ՝ հինգ ընտրատեղամասերում լցված քվեատուփերի անցքերը զմռսված չէին

---

[21] Ընտրությունների օրը ԸՄԴԱ-ն ավելի քան 100 թիմերը այցելեցին 1,885-ից 873 (46.3%) ընտրական տեղամասեր: Միջինը, յուրաքանչյուր թիմ կազմված երկու դիտորդից այցելել է մոտ 11 ընտրական տեղամաս: Այցի միջին տևողությունը կազմել է 35 րոպե: ԸՄԴԱ-ն դիտորդները նույնպես ներկա էին 84 ընտրական տեղամասերում հաշվման գործընթացը դիտարկելու համար:

դրանք օգտագործելուց հետո, իսկ 11 ընտրատեղամասերում քվեատուփերը լավ չէին փակված: Ավելին, ընտրատեղամասի բացման ժամանակ բաց կնիքներ են եղել 0124, 0623, 1650, 1696 ընտրատեղամսերում, և ըստ դիտարկումների, եղել են դրանից քիչ առաջ օգտագործված, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ քվեաթերթիկները նախապատրաստվել են խարդախ կերպով: 0442 ընտրատեղամասում կնիքը ժամանակավորապես դուրս է հանվել ընտրատեղամասից: 0668 և 1650 ընտրատեղամասեր բերվել է ավելի քիչ թվով քվեաթերթիկ, քան արձանագրված էր համապատասխան ԸԸՀ-երում: 0620 և 0621 ընտրատեղամասերում օգտագործվել են քվեաթերթիկներ, որոնք ըստ երևույթին, եղել են պատճեններ:

Յուրաքանչյուր ընտրատեղամասում ներկա էր միջին թվով տաս վստահված անձ, իսկ տեղական դիտորդները ներկա էին այցելած ընտրատեղամասերի կեսից ավելում: Վստահված անձանց նկատմամբ սպառնալիքներ դիտարկվել են փոքր թվով ընտրատեղամասերում, ներառյալ մեկ լուրջ դեպք 0813 ընտրատեղամասում, որտեղ ԸՄԴԱ-ն դիտորդները ստիպված եղան ուղեկցել վստահված անձին ապահով տեղ: Կային արձանագրություններ այն մասին, որ վստահված անձանց չի թույլատրվել գրանցել իրենց բողոքները, ելնելով այն սահմանափակումից (համաձայն Ընտրական Օրենսգրքի հոդված 57(2)), որ մեկ վստահված անձ չի կարող բողոք ներկայացնել; ինչպես նաև փոքր թվով դեպքեր, երբ մեկից ավելի վստահված անձանց կողմից ներկայացված բողոքները չեն գրանցվել:

## Բ. Հաշվումը

Զգալի պրոբլեմներ են դիտարկվել նաև հաշվման գործընթացի ժամանակ այն ընտրատեղամասերի մեկ երրորդում, որտեղ հաշվման գործընթացը դիտարկվել է ամբողջությամբ (84-ից 28-ում): 17 դեպքերում ընտրատեղամասերի հանձնաժողովների անդամները դիտարկվել են Ընտրական և Քրեական Օրենսգրքերի միտումնավոր խախտումներ կատարելիս:

Արդյունքների արձանագրությունների կեղծում տեղի է ունեցել ինը ընտրատեղամասերում (0347, 0378, 0408, 0553, 0800, 0814, 1086, 1236 և 1335): 1236 ընտրատեղամասում, այդ կեղծումն ընդգրկեց վավեր քվեաթերթիկների ոչնչացումը՝ արձանագրության թվերը համապատասխանեցնելու նպատակով: Բացի այդ, 0385 ընտրատեղամասում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը ստորագրություններ կեղծեց ընտրացուցակի մեջ: Հինգ ընտրատեղամասերում (0239, 0378, 0347, 0408 և 0379) յուրաքանչյուր թեկնածուի կամ կուսակցության օգտին քվեարկած քվեաթերթիկների հաշվման գործընթացը անցավ լռության մեջ, իսկ արդյունքները հանձնաժողովի անդամների միջև հաղորդվում էին շշուկով կամ գրառումների միջոցով, դրանով իսկ միտումնավոր կերպով խախտելով գործընթացի թափանցիկությունը:

Ընտրական նյութերի նկատմամբ միջամտություն այնպիսի պայմաններում, երբ հնարավորություն էր ստեղծվում խարդախությունների համար, դիտարկվել է հինգ ընտրատեղամասերում. 0272 ընտրատեղամասում շրջվել է բաց քվեատուփը; 0408 և 0553 ընտրատեղամասերում հաշվարկված քվեաթերթիկներով կնքված ծրարները նորից բացվել են; 0711 ընտրատեղամասում քվեաթերթիկները ժամանակավորապես հանվել են այն սենյակից, որտեղ տեղի էր ունենում հաշվումը; իսկ 1236

ընտրատեղամասում չօգտագործված քվեաթերթիկները չեն մարվել: Երկու ընտրատեղամասերում (0347 և 0272) դիտարկվել է, որ քվեաթերթիկները անօրինական կերպով գտնվում են ՏԸՀ-ի նախագահի և վստահված անձի մոտ: Հաշված կամ չհաշված քվեաթերթիկների առևանգում է տեղի ունեցել երեք ընտրատեղամասերում (0272, 0266 և 0408):

Հաշվման ընթացքում քվեատուփերի լցոնման ապացույցներ դիտարկվել են 0090 և 0347 ընտրատեղամասերում: Չկնքված քվեաթերթիկներ, որոնք հայտնաբերվել են քվեատուփերում 0090 և 0814 ընտրատեղամասերում, կնքվել են հաշվման ժամանակ, իսկ 1236 ընտրատեղամասում քվեատուփում հայտնաբերված չկնքված քվեաթերթիկները հայտարարվել են վավեր: Երկու տարբեր գույների կնիքներ դիտարկվել են քվեաթերթիկների վրա 1335 ընտրատեղամասում և երկուսն էլ ընդունվել են որպես վավեր, նույնը և բացահայտորեն պատճենահանված քվեաթերթիկը: 0385 և 1236 ընտրատեղամասերում կիրառվեց քվեաթերթիկների որպես անվավեր հայտարարման ընտրողական մոտեցում:

Դիտարկված այլ խախտումները ներառեցին լուրջ ընթացակարգային խնդիրներ, ինչպիսին է օրինակ՝ սխալներ արձանագրությունները լրացնելու գործընթացում: Այդ տիպի պրոբլեմների թիվը ի ցույց բերեց ԿԸՀ-ի կողմից հաշվման ժամանակ կիրառելի ընթացակարգերի վերաբերյալ պաշտոնական կարգադրումների բացակայությունը: Դիտորդները նկատեցին նաև հաշվման գործընթացի մեկնարկի անբացատրելի ձգձգումներ: Որոշ ընտրատեղամասերում դիտարկվել են դեպքեր, երբ հաշվման ընթացակարգերը խառնաշփոթի են վերածվել, որոշ դեպքերում եղել են նույնիսկ քաոտիկ: ՏԸՀ-րի նախագահները անօրինական կերպով հրաժարվել են ԸՄԴԱ-ն դիտորդներին տրամադրել արդյունքների արձանագրությունները 0329, 0385, 0495, 0800 և 1510 ընտրատեղամասերում:

Միջազգային դիտորդները իրենց աշխատանքի ընթացքում ենթարկվել են լուրջ սպառնալիքների և զգացել, որ իրենց անվտանգությանը սպառնում են 29 ընտրատարածքում, և սա անկախ այն բանից, որ իշխանությունները զգուշացվել էին ԸՄԴԱ-ն կողմից, որ այդ տարածքում ակնկալվում են սպառնալիքներ և բռնություններ: Մեկ այլ տեղ, ԸՄԴԱ-ն դիտորդին թույլ չեն տվել մտնել 0212 ընտրատեղամաս. դիտորդների տեղաշարժը սահմանափակված էր կամ ՏԸՀ-ի նախագահի կողմից նրանց արգելված էր խոսել ՏԸՀ-ի այլ անդամների կամ վստահված անձանց հետ (ընտրատեղամասեր 0112, 0294, 0328 և 0626); բացի այդ, 0112, 0219 և 0415 ընտրատեղամասերում ՏԸՀ-ի անդամները դիտորդների նկատմամբ հակադրություն կամ բռնություն են ցուցաբերել:

ԸՄԴԱ-ն դիտորդները հաստատված հաշվման ընթացակարգերը հիմնականում համարեցին ոչ ադեկվատ, շփոթեցնող և դանդաղ: Դիտորդների մի քանի թիմեր ներկա եղան հաշվման գործընթացների, որոնք տևեցին տաս ժամից ավելի: Մի քանի ընտրությունների քվեաթերթիկները հաշվելու կանոնակարգի բացակայությունը հանգեցրեց ոչ միատեսակ գործընթացի:

## Գ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ

ԸՄԴԱ-ն դիտորդները այցելեցին 39 ԸԸՀ՝ ընտրատեղամասերից ստացված արդյունքների աղյուսակավորման գործընթացը դիտարկելու համար: Չորս ԸԸՀ-րում արդյունքները աղյուսակավորվում էին ձեռքով, այլ ոչ թե օգտագործելով ունեցած համակարգիչները: Պրոբլեմներ և խախտումներ դիտարկվել են վեց ԸԸՀ-րում, որտեղ հիմնականում աղյուսակավորման գործընթացն անցնում էր ոչ սիստեմացված ձևով և քաոսային պայմաններում: ԸՄԴԱ-ն դիտորդները թիվ 29 ԸԸՀ-ի գրասենյակում ենթարկվել են սպառնալիքների ընտրական հանձնաժողովի պաշտոնյաների և այլ անձանց կողմից:

## Դ. ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

Ընտրական Օրենսգիրքը պահանջում է, որ ԸԸՀ-րը հավաքեն և հրապարակեն համամասնական և մեծամասնական ընտրակարգով ընտրությունների նախնական արդյունքները քվեարկության ավարտից հետո 18 ժամվա ընթացքում (այսինքն՝ ժամը 14:00-ին երկուշաբթի, մայիսի 26-ին): ԸԸՀ-րը հատկապես պարտավոր են հրապարակել նախնական արդյունքներն՝ տրոհված ըստ տեղամասերի: Սա կարևոր օրենսդրական երաշխիք է աղյուսակավորման գործընթացի թափանցիկությունը ապահովելու համար և թույլ է տալիս հավաստիանալ կամ բողոքարկել ինչպես յուրաքանչյուր ընտրատեղամասի գրանցված արդյունքների ճշգրտությունը, այնպես և ԸԸՀ-րի կողմից արդյունքների ամփոփման ճշգրտությունը:

Խախտելով Ընտրական Օրենսգիրքը և ԿԸՀ-ի ուղղակի կարգադրությունը, ԸԸՀ-րի մեծ մասը չեն հրապարակել նախնական արդյունքների աղյուսակներն ըստ տեղամասերի՝ ոչ համամասնական, ոչ էլ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների համար, և դրա փոխարեն տրամադրել են միայն ամփոփված նախնական արդյունքները: Հրապարակման վերջին ժամկետի ավարտից հետո ԸԴԱ-ն կողմից այցելած 41 ԸԸՀ-րից 35-ը չէին հրապարակել արդյունքները պահանջվող ֆորմատով:[22] Նախքան ընտրության օրը բոլոր ԸԸՀ-րի նախագահները հայտնեցին ԸԴԱ-ը, որ նրանք տեղյակ են իրենց պարտավորության մասին և, որ նրանց ԸԸՀ-րն ունեն տեխնիկական հնարավորություն նախնական արդյունքները պահանջվող ձևով հրապարակելու համար: ԸԸՀ-րից ոչ մեկի նախագահը, խախտելով օրենքը, չտվեց հիմնավոր պատճառաբանություն այդ արարքին:

ԿԸՀ-ը պետք է հրապարակի համամասնական ընտրությունների նախնական արդյունքները քվեարկության ավարտից հետո 28 ժամվա ընթացքում: Դրական կերպով փորձելով իրականացնել նախկին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և ԸՄԴԱ-ն հաշվետվությունների առաջարկությունները և բարելավել աղյուսակավորման իր գործընթացի թափանցիկությունը, ԿԸՀ-ը քայլեր ձեռնարկեց համամասնական ընտրակարգով ընտրությունների նախնական արդյունքներն ըստ տեղամասերի հրապարակելու համար: Դա իր մեջ ներառեց հեռուստատեսային հայտարարություններ և թարմացված

---

22 ԸԸՀ-րը, որոնք թերացել են հրապարակել երկու ընտրությունների արդյունքները պահանջվող ֆորմատով հետևյալն են. 2, 3, 4, 5, 8, 9, 10, 13, 14, 15, 17, 18, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 29, 30, 35, 36, 38, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 53 և 54. ԸԸՀ-եր 6 և 7 հրապարակել են միայն ընտրակարգերից մեկի արդյունքներն ըստ տեղամասերի, բայց ոչ մյուսը:

ինտերնետային էջեր: Սակայն, պաշտոնական նախնական արդյունքները հրապարակվեցին միայն ամփոփված ֆորմատով, քանի որ ԸԸՀ-ը չտրամադրեցին ամբողջական տեղեկություններ:

## Ե. ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

Ընտրական Օրենսգրքի հոդված 62(10)-ը թույլ է տալիս վստահված անձանց և ՏԸՀ-ի անդամներին պահանջել ԸԸՀ-ից ստուգել ընտրատեղամասի արդյունքները վերահաշվարկի միջոցով: Պահանջները պետք է ներկայացվեն գրավոր կերպով՝ ընտրությունների հաջորդ օրը, մինչև ժամը 14:00: Սահմանադրական Դատարանը նախագահական ընտրություններին վերաբերյալ իր որոշման մեջ նշեց, որ ԸԸՀ-ը, պահանջի առկայության դեպքում, պարտավոր են ձեռնարկել վերահաշվարկ; մինչ այդ մի շարք ԸԸՀ-եր քվեարկել էին նման պահանջները մերժելու համար: Սակայն, ԸՄԴԱ-ն դիտորդները պարզեցին, որ ԸԸՀ թիվ 30 բաց չէր գտնվել պահանջները ընդունելու համար, իսկ ԸԸՀ 29-ը մերժել է վերահաշվարկների պահանջները:

Տեղի ունեցան մոտ 80 ընտրատեղամասերից ստացված արդյունքների վերահաշվարկներ 26 ԸԸՀ-րում: Դրանց կեսից ավելին դիտարկվել են ԸԴԱ -ն դիտորդների կողմից: Մինչ վերահաշվարկների մեծ մասը հաստատեցին ՏԸՀ –ի արձանագրությունների մեջ նշված արդյունքները, դրանցից մի քանիսը ի հայտ բերեցին ՏԸՀ-ի արձանագրություններում տեղ գտած մեծ անճշտություններ, հատկապես՝ ԸԸՀ 12-ում: ԸԸՀ-եր 17-ում և 18-ում վերահաշվարկները բացահայտեցին նմանատիպ անճշտություններ արձանագրությունների և փաստացի տրված ձայների միջև և բացի այդ, ընտրողների ցուցակներում եղած մեծ թվով ստորագրություններ խարդախության լուրջ մտահոգության տեղիք տվեցին:

ԸԴԱ-ն դիտորդները նկատեցին ավելի լայն պրոբլեմներ որոշ վերահաշվարկների շուրջ: ԸԸՀ-ից մեկի նախագահը հրաժարական տվեց, պատճառաբանելով դա սպառնալիքներով, մինչդեռ ԸԸՀ-ի այլ անդամներ և վստահված անձինք նշում են, որ հարձակումների են ենթարկվել: ԸԸՀ 16-ում ԸԸՀ անդամները ԸԴԱ-ն միջամտել են դիտորդի աշխատանքին: ԸԸՀ 56-ում պարտված թեկնածուի վստահված անձինք հրաժարվեցին վերահաշվարկների իրենց պահանջներից, ըստ երևույթին, ճնշումների ազդեցության տակ: ԸԸՀ թիվ 12-ում վերահաշվարկի գործընթացի ժամանակ դիտարկվել են լուրջ խախտումներ:

## XIII. ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀՈՒՆԻՍԻ 14-15

Երեք ընտրատարածքներում՝ 12, 29 և 41 մեծամասնական ընտրությունների արդյունքները չեղյալ համարվեցին համապատասխան ԸԸՀ-ի կողմից ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակման վերջնական ժամկետից վեց օր առաջ: ԸԴԱ-ը արձանագրել էր նշանակալից պրոբլեմներ թիվ 29 ընտրատարծքում, մինչդեռ 12 և 41 ընտրատարածքներում թեկնածուներից ստացված բողոքները առիթ հանդիսացան վերահաշվարկների, որոնք ի հայտ բերեցին թվային զգալի անճշտություններ: Որպես ողջունելի զարգացում նկատենք, որ համապատասխան մարմինները արագ

արձագանքեցին ԸԴԱ-ն կողմից այդ երեք ընտրատարածքներում արձանագրված խախտումներին: Սակայն, առնվազն երեք այլ ընտրատարածքներում, որոնց վերաբերյալ ԸԴԱ-ը ուներ լուրջ մտահոգություններ, արդյունքները մնացին անփոփոխ: Այն երեք ընտրատարածքներում, որտեղ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները չեղյալ համարվեցին, համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները ներառվեցին հանրապետական ընդհանուրի տվյալների մեջ, չնայած այն մտահոգություններին, որ այս ընտրատարածքներում անցկացված երկու ընտրակարգով ընտրությունների արդյունքներում էլ կեղծիքներ դիտարկվել են:[23]

29 ընտրատարածքում (Արմավիր) անցած ընտրությունները կրկին անգամ անցկացվեցին հունիսի 14-ին, իսկ ընտրատարածքներ 12 (Երևան, Շենգավիթ) և 41 (Հրազդան) անցկացվեցին հունիսի 15-ին: ԸԴԱ-ը ավելի քիչ թվով ներկայացուցիչներ պահեց Հայաստանում՝ նորից անցկացվող ընտրությունները դիտարկելու համար:[24]

Քվեարկության և հաշվման գործընթացներն անցան հանգիստ, չնայած, որ թիվ 12 ընտրատարածքում արձանագրվեց լարվածություն: Ընտրատեղամասերից շատերի դրսում ներկա էին մեծ թվով ոստիկաններ: Ըստ ԸԴԱ-ն գնահատականի, քվեարկության գործընթացը առանց պրոբլեմների, կամ միայն փոքր պրոբլեմներով անցավ ընտրատեղամասերի 80 տոկոսում: Հաշվման գործընթացի վերաբերյալ զգալի խնդիրներ չեն արձանագրվել: Բոլոր երեք ընտրատարածքներում ընտրողների մասնակցությունը էականորեն ավելի բարձր էր, քան մայիսի 25-ին:

ԸԴԱ-ն դիտորդները ՏԸՀ-ի աշխատանքը և պրոֆեսիոնալիզմի աստիճանը ավելի բարձր էին գնահատել, քան մայիսի 25-ի ընտրությունների ժամանակ: Ընտրատեղամասերի մեծ մասի ՏԸՀ-երի անդամների կազմերը փոփոխվել էին, հանձնաժողովի անդամներից շատերը պետական քաղաքացիական ծառայողներ էին: Որոշ խախտումներ, սակայն, դիտարկվել են, ներառյալ կողմնակի անձանց ներկայությունը: Ավելի լուրջ խախտումներ նկատվել են թիվ 41 ընտրատարծքում՝ դիտարկվել է կարուսելային քվեարկության սխեմա և թիվ 12 ընտրատարածքում՝ անձնագրերի հավաքում: Այլ պրոբլեմները վերաբերում էին ընտրացուցակներում կատարված փոփոխություններին, այդ թվում՝ որոշ ընտրողներին ցուցակներից անբացատրելի պատճառներով հանելը:

ԸԸՀ-ի աշխատանքը՝ արդյունքների ստացման և ամփոփման գործում, գնահատվեց դրական, բացի թիվ 12 ընտրատարածքից: Բոլոր երեք ԸԸՀ-ը թերացան արդյունքներն ըստ տեղամասերի հրապարակելու մեջ: Թիվ 12 ընտրատարածքում վերահաշվարկվեցին վեց ընտրատեղամասերի արդյունքները: Թիվ 29 և 41 ընտրատարածքների արդյունքները բերեցին նույն հաղթողներին, ինչ չեղյալ համարված արդյունքները՝ չնայած այլ հաղթող ձայների զգալի տարբերություններով (թիվ 29 ընտրատարածքում տարբերությունը մեծապես նվազել էր, իսկ թիվ 41 ընտրատարածքում տարբերությունն աճել էր): Թիվ 12 ընտրատարածքում առաջին

23 Ընտրական Օրենսգիրքը չի նախատեսում առանձին ԸԸՀ-երում համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները չեղյալ համարելու հնարավորությունը, նույնիսկ եթե նույն ընտրատարածքի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները հայտարարվում են անվավեր լուրջ խախտումների հիման վրա:

24 Հայաստանում բնակվող միջազգային համայնքից հավաքված դիտորդները դիտարկեցին քվեարկությունը 79 տեղամասերից 74-ում (94 տոկոս) երեք ընտրատարածքներում, իսկ հաշվման գործընթացը 10 տեղամասերում (13 տոկոս):

երկու տեղը գրաված թեկնածուները տեղերով փոխվեցին ըստ չեղյալ համարված արդյունքների՝ հավաքած ձայների մեծ տարբերությամբ:

## XIV. ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՈՒ ՀԵՏԱԳԱ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սահմանադրական Դատարանը մինչև հունիսի 6-ին 7-օրյա ժամկետի ավարտը ստացավ 19 դիքում՝ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների վերաբերյալ: Դատարանը միացրեց դիմումների երկու զույգ, որ վերաբերում էին նույն ընտրատարածքներին, և քննության չընդունեց երկու դիմում; մինչդեռ ևս մեկ դիմող հետ վերցրեց իր դիքումը: Այդպիսով, քննության առնվեց 14 պաշտոնական գործ:[25] Այն երկու դիմումը, որ չընդունվեցին դատարանի կողմից, վերաբերում էին թիվ 4 և թիվ 9 ընտրատարածքներում կոնկրետ ընտրատեղամասերի արդյունքների վիճարկմանը: Սահմանադրական Դատարանը համարեց, որ քանի որ նման գործերը վերաբերում են «քվեարկության արդյունքներին» և ոչ թե «ընտրությունների արդյունքներին», ապա դրանք գտնվում են դատարանի իրավասությունից դուրս: Համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների վերաբերյալ ներկայացվել էր մեկ դիմում «Արդարություն» դաշինքի կողմից և ընդունվել էր քննության: Բացի այդ, ներկայացվել և քննվել էր նաև դիմում թիվ 12՝ ընտրատարածքում անցած նոր ընտրությունների արդյունքների վերաբերյալ:

Սահմանադրության հոդված 102 պահանջում է, որ Սահմանադրական Դատարանը գործի վերաբերյալ որոշում կայացնի 30 օրվա ընթացքում: Դա նշանակում է, որ Դատարանը ստիպված է աշխատել զգալի ժամկետային ճնշման տակ այդ 16 գործերը լսելու համար, հավանաբար փոխզիջելով բոլոր հարցերը ամբողջովին քննելու իր հնարավորությունը և գործի նյութերի տրամադրման և նյութեր տրամադրելու որոշումների իրականացման առումով խնդիրներ առաջացնելով:

Ընդհանուր 15 մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները վիճարկող դիմումներից երկուսը՝ 16 և 50 ընտրատարածքներին վերաբերող, բավարարվեցին, հանգեցնելով պաշտոնական արդյունքների անվավեր ճանաչմանը և նոր ընտրությունների անցկացմանը՝ հունիսի 29–ին (թիվ 50 ընտրատարածք) և հուլիսի 20-ին (թիվ 16 ընտրատարածք): Մնացյալ 13 դիմումները մերժվեցին: Համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները վիճարկող պահանջը նույնպես մերժվեց:

Սահմանադրական Դատարանի կողմից նշանակված նոր ընտրությունները չեն դիտարկվել ԸԴԱ-ն կողմից, քանի որ վերջինս արդեն փակվել էր: Թիվ 50 ընտրատարածքում (Արթիկ), և թիվ 16 ընտրատարածքում (Երևան), նոր ընտրությունների արդյունքում ընտրված թեկնածուն մնաց նույնը, ինչ մայիսի 25 ընտրությունների արդյունքում:

---

25 Հետևյալ ընտրատարածքների արդյունքները վիճարկվեցին. 3, 11, 13, 16, 18, 20, 30, 31, 33, 43, 46, 50, 55 և 56.

# XV. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համամասնական ընտրակարգով ընտրությունների վերջնական արդյունքները հայտարարվեցին մայիսի 31-ին: Մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները հայտարարվել էին դրանից մեկ օր առաջ:

Ձայների հաշվման ընթացքում ԸՄԴԱ-ն կողմից դիտարկված խախտումները և առանձին ՏԸՀ-րի կողմից հրապարակված արդյունքների վերլուծությունը առիթ տվեց մտահոգության, որ հայտարարված 1,234,925 ընտրողների մասնակցությունը ուռճացված է: Նույնիսկ այս թիվը ներկայացրեց ընտրողների ընդհանուր թվի 52.71% և ցույց տվեց ընտրողների մասնակցության զգալի նվազեցում՝ համեմատած 68.44% ընտրողների թվի հետ, որոնք, ըստ պաշտոնական տվյալների, մասնակցել էին 2003 թ. նախագահական ընտրությունների երկրորդ փուլում:

## Ա. Համամասնական ցուցակներ

Համազգային համամասնական ցուցակներով ընտրություններում հինգ կուսակցություններ և մեկ ընտրական դաշինք անցան ընդհանուր ձայների հինգ տոկոսի սահմանը և հնարավորություն ստացան ներկայացված լինելու Ազգային ժողովում: [26] Համամասնական ընտրակարգով զբաղեցրած 75 պատգամավորական տեղերի բաշխումը հետևյալն է.[27]

| | |
|---|---|
| Հանրապետական Կուսակցություն | 23 տեղ |
| Արդարություն Դաշինք (նախընտրական դաշինք) | 14 տեղ |
| Օրինաց Երկիր | 12 տեղ |
| Հայ Հեղափոխական Դաշնակցություն | 11 տեղ |
| Ազգային Միաբանություն Կուսակցություն | 9 տեղ |
| Միավորված Աշխատանքային Կուսակցություն | 6 տեղ |

Այս վեց կուսակցություններից/դաշինքներից հինգը համամասնական ընտրակարգով ներկայացուցչություն էին շահել Ազգային ժողովում նաև 1999թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Նորեկը՝ Միավորված Աշխատանքային Կուսակցությունն էր, որը հիմնվել է միայն 2002թ.-ին: 1991թ.-ին Հայաստանի անկախությունը հռչակելուց հետո առաջին անգամ Կոմունիստական Կուսակցությունը չի ստացել տեղեր Ազգային ժողովում:

Հայաստանի ժողովրդավարական Ազատական Միությունը (ՀԺԱՄ-ը), հավաքելով 4.66 տոկոս, համամասնական ընտրակարգով ընտրություններում առաջինն էր՝ Ազգային ժողով անցնելու համար անհրաժեշտ հինգ տոկոսի սահմանը չանցած կուսակցությունների/դաշինքների շարքում: Այս կուսակցությունը, որին վերոհիշյալ սահմանն անցնելու համար չհերիքեց մոտ 4,000 ձայն, բողոքեց ԸԴԱ-ը, որ չի կարողացել ստանալ տեղ խորհրդարանում կեղծ կերպով ուռճացրած ընտրողների մասնակցության

[26] Հինգ տոկոսի սահմանը հաշվարկվում է բոլոր կուսակցությունների և դաշինքների օգտին տրված ձայների թվի և անճշտությունների թվի հանրագումարից:

[27] Համամասնական ընտրացուցակներով ընտրությունների ամբողջական արդյունքները, ներառյալ 21 կուսակցություններից և դաշինքներից յուրաքանչյուրի օգտին տրված ձայների տոկոսը տրված է Հավելված Ա-ում:

թվի պատճառով, սակայն այն չցանկացավ պնդել այդ հարցը Սահմանադրական Դատարանում:

## Բ. Մեծամասնական ընտրակարգ

56 մեծամասնական ընտրատարածքներից 37-ում հաղթեցին քաղաքացիների նախաձեռնությամբ առաջադրված թեկնածուները, և ոչ թե կուսակցությունների կողմից առաջադրվածները:

| | |
|---|---|
| Հանրապետական Կուսակցություն | 10 տեղ |
| Օրինաց Երկիր | 7 տեղ |
| Հանրապետություն Կուսակցություն (Արդարություն Դաշինքի մի մաս) | 1 տեղ |
| Համահայկական Աշխատավորների Կուսակցություն (հարում է ՀՅԴ-ին) | 1 տեղ |
| Քաղաքացիների նախաձեռնությամբ (պաշտոնապես անկուսակցական) | 37 տեղ |

## Գ. Ազգային ժողովի վերջնական կազմը

Համաձայն Ազգային ժողովի կանոնակարգի, համամասնական ընտրակարգով ներկայացուցչություն շահած կուսակցություններն ու դաշինքները կազմում են խորհրդարանական խմբակցությունները; այլ խմբակցություններ կազմվել չեն կարող: Մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորները կարող են միանալ խմբակցություններից մեկին, վերջինիս համաձայնությամբ: Քանի որ առկա է վեց խմբակցություն, ընտրական հանձնաժողովները կրկին կազմված կլինեն ինը անդամից:

Հունիսի 12-ին կայացած Ազգային ժողովի առաջին գումարումից հետո ստեղծված խմբակցությունների կազմը հաստատեց, որ մեծամասնական ընտրակարգով ընտրված անկուսակցական պատգամավորներից շատերը կապված էին կուսակցությունների հետ:

*Ազգային ժողովի կազմը ըստ պատգամավորների խմբակցությունների*

| | |
|---|---|
| Հանրապետական Կուսակցություն խմբակցություն | 40 տեղ |
| Օրինաց Երկիր խմբակցություն | 19 տեղ |
| Արդարություն Դաշինք խմբակցություն | 15 տեղ |
| Հայ Հեղափոխական Դաշնակցություն խմբակցություն | 11 տեղ |
| Ազգային Միաբանություն Կուսակցություն խմբակցություն | 9 տեղ |
| Միավորված Աշխատանքային Կուսակցություն խմբակցություն | 6 տեղ |
| «Ժողովրդի պատգամավոր» խմբակցություն | 17 տեղ |
| Ոչ մի խմբակցության չպատկանող | 14 տեղ |
| **Ընդամենը** | 131 տեղ |

Ընտրված յոթ կանանցից վեցը ընտրված են համամասնական ցուցակներով (երկուական կին ՀՅԴ-ից և «Օրինաց Երկիր» կուսակցությունից, և մեկական կին «Հանրապետական Կուսակցությունից» և «Միավորված Աշխատանքային

Կուսակցությունից»): «Օրինաց Երկիր» կուսակցության համամասնական ընտրացուցակից ընտրված կանանցից մեկը նշանակվեց Մշակույթի և Երիտասարդության Հարցերով Նախարար: Մեկ այլ կին հաղթեց մեծամասնական ընտրակարգով թիվ 32 ընտրատարածքում, որտեղ նա անկուսակցական թեկնածու էր՝ ընդգրկված Հանրապետական Կուսակցության համամասնական ընտրացուցակում, և միացավ իր խմբակցությանը նորընտիր Ազգային ժողովում:

## XVI. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի իշխանություններին առաջարկվում է հաշվի առնել հետևյալ առաջարկությունները.

### Ա. Ընդհանուր առաջարկություններ

1. Հայաստանում 2003թ. նախագահական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ վերջնական հաշվետվության մեջ զետեղված առաջարկությունները պետք է իրականացվեն: Հիմնական առաջարկությունները, որոնք ցայսօր չեն իրականացվել հետևյալն են.
   - (i) Ընտրական և Քրեական օրենսգրքերի խախտումներ կատարած անձինք պետք է կանչվեն պատասխանատվության;
   - (ii) Պետականորեն ֆինանսավորվող լրատվամիջոցների նկատմամբ պետք է կիրառվեն սանկցիաներ՝ Ընտրական Օրենսգրքով նախատեսված նախագահական թեկնածուներին հավասար լուսաբանում տրամադրելու պահանջը խախտելու համար;
   - (iii) Վարչական կալանքին վերաբերող հոդվածները պետք է հանվեն Վարչական Իրավախախտումների մասին Օրենսգրքից; և
   - (iv) Պետք է ապահովել նախընտրական քարոզարշավի ժամանակ հանրային ռեսուրսների օգտագործման պարզ սահմանման առկայությունը օրենքում:

2. Ընտրական հանձնաժողովների անդամներ նշանակող մարմինները պետք է վարչական և քաղաքական պատասխանատվության ենթարկեն իրենց կողմից նշանակված ԸԸՀ-րի և ՏԸՀ-րի այն անդամներին, որոնք խախտել են օրենքը: Այդ անձինք չպետք է կրկին ընդգրկվեն ընտրական հանձնաժողովներում:

3. Ամեն ջանք պետք է գործադրվի՝ ընտրական գործընթացի յուրաքանչյուր փուլում թափանցիկությունը ապահովելու համար: Ընտրություններում շահագրգռված կողմերը պետք է անհանդուրժողական վերաբերմունք ցուցաբերեն թափանցիկությունը սահմանափակող օրենսդրական կամ վարչական ճանապարհներով կատարվող փորձերի նկատմամբ:

### Բ. Օրենսդրական Դաշտը

4. Ընտրական հանձնաժողովների անդամներին նշանակելու բանաձևը պետք է վերանայվի՝ այնպես, որ ապահովվի ընտրություններում շահագրգռված կողմերի վստահությունը և ընտրական համակարգի արհեստավարժ և անկողմնակալ աշխատանքը:

5. Ընտրական Օրենսգրքի հոդված 40-ը, որը վերաբերում է բողոքներին և բողոքարկմանը, պետք է վերանայվի այնպես, որ ապահովի բողոքարկման պարզ, արդյունավետ և թափանցիկ գործընթաց: Այն պետք է ներառի համապատասխան սանկցիաներ ընտրական իրավախախտումների դեմ և ոտնահարված իրավունքներով ցանկացած դասակարգի անձանց իրավունքների վերականգնման մեխանիզմներ, և պետք է պահանջի հանձնաժողովներից և դատարաններից, որպեսզի նրանք հիմնավորեն իրենց որոշումները:

6. Ընտրական Օրենսգիրքը և Քաղաքացիական Դատավարության Օրենսգիրքը պետք է փոփոխվեն այնպես, որ թույլատրվի ընտրական վեճերի բողոքարկումը առաջին ատյանի դատարաններից ավելի բարձր ատյանի դատարանում` ադեկվատ ժամկետներում:

7. Ընտրական Օրենսգիրքը պետք է փոփոխվի այնպես, որ.

- (i) նկարագրի ընտրատարածքների չափերի միջև տարբերությունները հաշվարկելու մեթոդը;
- (ii) ապահովի հետևողականություն` մշտական բնակության հարցում;
- (iii) թույլ տա դաշինքներին առաջադրել մեծամասնական թեկնածուներ;
- (iv) նվազեցվի թեկնածուներին առաջադրելու համար պահանջվող ստորագրությունների թիվը` մինչև համահանրապետական ընտրատարածքում գրանցված ընտրողների թվի մեկ տոկոսը մաքսիմում;
- (v) նվազեցվի օրենքի պահանջը` ըստ որի պետք է ներկայացնել և՛ ստորագրահավաքների թերթիկները, և՛ ֆինանսական ավանդները, և պահանջել ներկայացնել այդ երաշխիքներից միայն մեկը;
- (vi) այն ներառի պարզ և իրատես համատեղման պայմաններ` պետական պաշտոն զբաղեցնելու և միաժամանակ քաղաքական պաշտոնի հավակնելու համար;
- (vii) այն ենթարկի մեծամասնական և համամասնական թեկնածուներին հավասար սահմանափակումների` պետական պաշտոն զբաղեցնելու համատեղման առումով;
- (viii) այն պահանջի թեկնածություն առաջադրելու համար տրամադրված բոլոր ստորագրությունների ստուգում, եթե ճիշտ ստորագրությունների թիվը չի հասել օրենքով պահանջվող սահմանին;
- (ix) այն պարզ նշի ԿԸՀ-ի և ԸԸՀ- րի լիազորությունները` թեկնածուի գրանցմանը վերաբերող հետաքննություն անցկացնելու համար;
- (x) այն բարելավի ընտրական հանձնաժողովների կողմից նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման և ծախսումների նկատմամբ վերահսկողությունը;
- (xi) այն հնարավորություն տա քվեարկելու հիվանդանոցում գտնվող ընտրողներին կամ այն ընտրողներին, որոնք ինչ-ինչ պատճառներով չեն կարող այցելել իրենց ընտրատեղամասն ընտրությունների օրը, ապահովելով բավարար երաշխիքներ ընտրակեղծիքների դեմ;
- (xii) այն պահանջի, որ քվեատուփերը լինեն թափանցիկ և պարզաբանի, որ ընտրատեղամասում կարող է օգտագործվել մեկ քվեատուփից ավել;
- (xiii) այն թույլ տա ընտրատեղամասի վարչական գրանցամատյանում գրանցել խախտման փաստ մեկ վստահված անձի կամ մեկ հանձնաժողովի անդամի պահանջով;
- (xiv) այն պահանջի ավելի շատ երաշխիքներ կրկնակի քվերկությունից խուսափելու համար, ներառյալ` ընտրողների մատերը անտեսանելի ներկով նշելը;

(xv) այն տրամադրի ամբողջական մանրամասներ, թե ինչպես են հաշվառվում «բոլորին դեմ» ձայները, կամ հանի այդ տարբերակը քվեաթերթիկներից;
(xvi) այն պահանջի ԿԸՀ-ից հրապարակել նախնական և վերջնական արդյունքները՝ տրոհված ըստ տեղամսերի, և պահանջի ԸԸՀ-րից հրապարակել նրանց նախնական արդյունքները՝ տրոհված ըստ տեղամասերի այն ժամանակ, երբ այդ արդյունքները փոխանցվում են ԿԸՀ-ին;
(xvii) այն թույլ տա ԸԸՀ-ի և ՏԸՀ-ի անդամների հեռացումը վերադաս ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ ընտրական իրավախախտում կատարելու կամ դրա կատարումը թույլ տալու համար; և
(xviii) այն արտացոլի ընտրական վեճերի վերաբերյալ 2002թ. հոկտեմբերից ի վեր Սահմանադրական Դատարանի կողմից ընդունված որոշումները:

## Գ. Ընտրությունների կազմակերպումը

8. Հայաստանի իշխանությունները պետք է մանրակրկիտ կերպով վերանայեն ընտրողների ցուցակները կազմելու և պահելու համակարգը: Այդ գործընթացում ներգրավված բոլոր մարմինների դերը և իրավասությունները պետք է մանրամասնորեն պարզաբանվեն: Պետք է ձեռնարկվեն շարունակական և համակարգված քայլեր՝ ամբողջ հանրապետությունում ընտրողների ցուցակների որակը և ճշգրտությունը բարելավելու համար, պետք է նաև ստեղծվեն երաշխիքներ՝ ուղղված կրկնակի մուտքագրումների դեմ:

9. Ինչպես պահանջվում է Ընտրական Օրենսգրքով, ԿԸՀ-ը և ԸԸՀ-րը պետք է պաշտոնական որոշումներ ընդունեն նրանց կողմից ստացված բոլոր բողոքների և բողոքարկումների վերաբերյալ, և ժամանակին հրապարակայնորեն մատչելի դարձնեն ստացված բոլոր բողոքների և դրանց վերաբերյալ ընդունված որոշումների մանրամասները:

10. ԿԸՀ-ը պետք է.
(i) անհապաղ քայլեր ձեռնարկի պատասխանատվության ենթարկելու համար այն ԸԸՀ-րի նախագահներին, որոնք խախտելով Ընտրական Օրենսգիրքը և ԿԸՀ-ի կարգադրությունը, չեն հրապարակել նախնական արդյունքները պահանջվող ֆորմատով;
(ii) ապահովի իր որոշումները և կարգադրությունները հրապարակելու և ԸԸՀ-րին, ՏԸՀ-րին, քաղաքական կուսակցություններին և ավելի լայն հասարակության մեջ տարածելու համակարգված մեթոդ: Պարտավորեցնող կարգադրությունները պետք է կազմվեն գրավոր;
(iii) չեղյալ համարի այն որոշումները, որոնք սահմանափակում են վստահված անձանց տեղաշարժը ընտրատեղամասերում և սահմանափակում են ստուգումների պահանջների թիվը;
(iv) մշակի մանրամասն ուղեցույց թեկնածուների գրանցման չափանիշների վերաբերյալ: Այդ ուղեցույցը պետք է հրապարակայնորեն մատչելի լինի մինչև գրանցման գործընթացի սկիզբը:
(v) վերանայի հաշվման ընթացակարգերը՝ հաշվման ընթացքում լիակատար թափանցիկություն և արդյունավետություն ապահովելու համար; և
(vi) փորձի բարելավել ԸԸՀ-րի ջանքերը՝ ընտրատեղամասերը հաշմանդամների համար մատչելի դարձնելու ուղղությամբ:

## Դ. Լրատվամիջոցները

11. Մասնավոր էլեկտրոնային լրատվամիջոցները պետք է համապատասխանեն նախընտրական քարոզարշավի ժամանակաշրջանում օբյեկտիվ և անկողմնակալ լուսաբանման հիմնական պահանջներին:

12. Հեռուստատեսության և Ռադիոյի մասին օրենքը պետք է փոփոխության ենթարկվի այնպես, որպեսզի ապահովի ավելի պարզ չափանիշներ՝ լիցենզիա ստանալու մրցույթների անցկացման համար, ինչպես և Հեռուստատեսության և Ռադիոյի Ազգային Կոմիտեի ավելի անկախ կազմը:

## Ե. Կանանց մասնակցությունը

13. Զգալի և հետևողական քայլեր պետք է ձեռնարկվեն ընտրական գործընթացում կանանց մասնկցությունը բարձրացնելու համար, և հատկապես՝ կանանց ներկայացվածությունը թեկնածուների միջև և խորհրդարանում բարձրացնելու ուղղությամբ:

# Հավելված Ա. Համամասնական ընտրակարգով ընտրությունների վերջնական արդյունքները

| Կուսակցության/դաշինքի անվանում | Ստացված ձայների թիվը | Վավեր ձայների % | Զբաղեցրած տեղերի թիվը |
|---|---|---|---|
| Հանրապետական Կուսակցություն – ՀՀԿ | 280,363 | 23.55 | 23 |
| Արդարություն Դաշինք - ԱԴ | 163,203 | 13.71 | 14 |
| Օրինաց Երկիր – ՕԵԿ | 147,956 | 12.43 | 12 |
| Հայ Հեղափոխական Դաշնակցություն – ՀՅԴ | 136,270 | 11.45 | 11 |
| Ազգային Միաբանություն Կուսակցություն - ԱՄԿ | 105,480 | 8.86 | 9 |
| Միավորված Աշխատանքային Կուսակցություն - ՄԱԿ | 67,531 | 5.67 | 6 |
| | | | |
| Հայաստանի ժողովրդավարական Ազատական Միություն - ՀԺԱՄ | 55,443 | 4.66 | |
| Հզոր Հայրենիք - ՀՀ | 39,586 | 3.33 | |
| Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցություն – ՀՌԱԿ | 34,108 | 2.87 | |
| Արժանապատվություն, ժողովրդավարություն, Հայրենիք - ԱժՀ | 33,605 | 2.82 | |
| Հայաստանի Կոմունիստական Կուսակցություն – ՀԿԿ | 24,991 | 2.10 | |
| Արդյունաբերողների և կանանց միություն - ԱԿՄ | 24,388 | 2.05 | |
| ժողովրդական Կուսակցություն – ժԿ | 13,214 | 1.11 | |
| Աշխատանք, Օրենք, Միասնություն - ԱՕՄ | 10,955 | 0.92 | |
| Ազատական Դաշինք | 9,711 | 0.82 | |
| Հայ Քրիստոնեա-Դեմոկրատական Միություն - ՀՔԴՄ | 8,057 | 0.68 | |
| Ազգային Համաձայնություն Կուսակցություն - ԱՀԿ | 7,676 | 0.64 | |
| Հայոց Համազգային Շարժում - ՀՀՇ | 6,473 | 0.54 | |
| Արդարություն կուսակցություն - ԱԿ | 6,200 | 0.52 | |
| Նորացված Կոմունիստական Կուսակցություն - ՆԿԿ | 6,078 | 0.51 | |
| Հայ արիների բռունցք - ՀԱԲ | 3,438 | 0.29 | |

Գրանցված ընտրողների ընդհանուր թիվը՝ 2,340,744

| | | |
|---|---|---|
| **Ընտրությանը մասնակցած** գրանցված ընտրողների ընդհանուր թիվը (ընտրողների ցուցակներում ստորագրությունների ընդհանուր թիվը) | | 1,233,757 |
| Մասնակցության **տոկոսը** | 52.7% | |

| | |
|---|---|
| **Քվեաթերթիկների** ընդհանուր թիվը **քվեատուփերում** | 1,234,925 |
| **Անվավեր** քվեաթերթիկների ընդհանուր թիվը | 34,622 |
| **«Բոլորին դեմ»** ձայների ընդհանուր թիվը | 14,921 |

# ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ՄԱՍԻՆ

Ժողովրդավարական Հաստատությունների և Մարդու Իրավունքների Գրասենյակը (ԺՀՄԻԳ)՝ ԵԱՀԿ-ի այն հիմնական հաստատությունն է, որն աջակցում է մասնակից երկրներին «երաշխավորել մարդու իրավունքների և հիմնավոր ազատությունների նկատմամբ լիարժեք հարգանք, հետևել օրենքի գերակայությանը, քարոզել ժողովրդավարության սկզբունքները և (...) կառուցել, ամրապնդել և պաշտպանել ժողովրդավարական հաստատություններ, ինչպես նաև հանդուրժողականություն ցուցաբերել հասարակության նկատմամբ» (1992թ. Հելսինկիի Փաստաթուղթ):

ԺՀՄԻԳ-ը, որի գլխավոր գրասենյակը գտնվում է Վարշավայում (Լեհաստան), ստեղծվել է ԵԱՀԿ-ի պետությունների կամ կառավարության ղեկավարների որպես Ազատ Ընտրությունների Գրասենյակ 1990թ. Փարիզյան Գագաթաժողովում և սկսել է գործել 1991թ. մայիսից: Մեկ տարի անց Գրասենյակի անվանումը փոփոխվեց այնպես, որ արտացոլի ավելի լայնացված մանդատ, որը կընդգրկի մարդու իրավունքները և դեմոկրատիզացիան: Այսօր Գրասենյակում աշխատում են 100 հոգուց ավելի մարդ:

ԺՀՄԻԳ-ը՝ Եվրոպայի առաջատար գործակալությունն է **ընտրությունների դիտորդական** բնագավառում: Այն ամեն տարի կոորդինացնում և կազմակերպում է հազարավոր դիտորդների բաշխում, որպեսզի ԵԱՀԿ-ի տարածաշրջանում անցկացվող ընտրությունները գնահատվեն ըստ դրանց համապատասխանության ազգային օրենսդրությանը և միջազգային չափանիշներին: Նրա ունիկալ մեթոդոլոգիան թույլ է տալիս խորաթափանց հայացքով դիտել ընտրական գործընթացի բոլոր տարրերը: ԺՀՄԻԳ-ը՝ աջակցող ծրագրերի միջոցով, օգնում է մասնակից երկրներին բարելավել իրենց ընտրական համակարգը:

Գրասենյակի **դեմոկրատիզացման** գործունեությունն ընդգրկում է հետևյալ թեմատիկ ոլորտները. օրենքի գերակայությունը, քաղաքացիական հասարակությունը, տեղաշարժի ազատությունը, գենդերային հավասարությունը, մարդկանց առքուվաճառքը: ԺՀՄԻԳ-ը ավելի քան 100 նպատակային աջակցող ծրագրեր է իրականացնում յուրաքանչյուր տարի, որպեսզի դյուրին դարձնի և ավելի ընդլայնի պետության համապատասխանությունը ԵԱՀԿ-ի պարտավորություններին և զարգացնի ժողովրդավարական կառույցներ:

ԺՀՄԻԳ-ը **մարդու իրավունքների** պաշտպանության խնդիրներն է առաջ տանում, տեխնիկական աջակցության ծրագրերի և մարդկային չափումների հետ կապված դասընթացների միջոցով: Այն հետազոտություններ է անցկացնում և զեկույցներ է պատրաստում մարդու իրավունքներին վերաբերող տարբեր թեմաներով: Այն նաև ամեն տարի կազմակերպում է բազմաթիվ հանդիպումներ՝ մասնակից պետությունների կողմից ԵԱՀԿ-ի մարդկային չափումների պարտավորությունների կատարումը գնելու նպատակով:

ԺՀՄԻԳ-ը խորհուրդներ է տալիս մասնակից պետություններին՝ նրանց գնչուական ցեղերի (**ռոմաների և սինթիների**) նկատմամբ քաղաքականություն վարելու ուղղությամբ: Այն նպաստում է ռոմաների և սինթիների համայնքներում կարողությունների զարգացմանը և նրանց միջև գործող ցանցի ստեղծմանը, և քաջալերում է ռոմաների և սինթիների ներկայացուցիչների մասնակցությունը օրենսդիր մարմիններում:

Գրասենյակը նաև գործում է որպես պարզաբանող հաստատություն ռոմաների և սինթիների հարցերի փոխանակման համար` ազգային և միջազգային գործիչների միջև:

ԺՀՄԻԳ-ի ողջ գործունեությունը տարվում է ԵԱՀԿ-ի հաստատությունների և դաշտային աշխատանքների, ինչպես նաև այլ միջազգային կազմակերպությունների հետ:

Լրացուցիչ տեղեկատվությունը զետեղված է ԺՀՄԻԳ-ի ինտերնետային կայքում (www.osce.org/odihr):